

**«ՊԱՏԻ» ՓԼՈՒՋՈՒՄԸ.
ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
Գազիկ Տերտերյան**

1989թ. նոյեմբերի 9-ին «բեռլինյան պատը» հսկող ԳԴՀ պարեկները լքեցին իրենց պահակակետերը, իսկ երկու տարի հետո այն, ինչը կոչվում էր ԽՍՀՄ եւ «սոցիալիստական ճամբար», դադարեց գոյություն ունենալ: Տեղի ունեցածը հաճախ բնութագրում են որպես «Սառը պատերազմի ավարտ», «ժողովրդավարության հաղթանակ», սակայն կարելի է հանդիպել նաեւ «աշխարհաքաղաքական ողբերգություն», «քաղաքակրթական կաթված» արտահայտությունների: Բոլոր պարագաներում «պատի փլուզումը» խորհրդանշեց մի նոր դարաշրջանի (երբեմն այն անվանում են «պոստմոդեռն») սկիզբ, որն էապես տարբերվում էր նախորդից: Պատահական չէ, որ այդ իրադարձության քսանամյակը միջազգային հանրությունում նշվեց շուքով. կազմակերպվեցին պաշտոնական հանդիսություններ, իսկ ՋԼՄ-ում ընթացան լայն քննարկումներ: Սակայն անդրադարձներն այդ խնդրին հայրենական տեղեկատվական դաշտում սակավ էին:

Հայկական իրողություններ. Մեր «բեռլինյան պատը» 20 տարի առաջ անցնում էր Լաչինով, եւ հաղթանակած պատերազմի արդյունքում՝ վերամիավորումը կայացավ միայն 1994-ին: Հայաստանյան հանրությունում այդ ժամանակաշրջանում գերակայում էին ազգային եւ պատմական արմատներ ունեցող գաղափարները, ինչը յուրահատկություն էր հաղորդում ընթացող հասարակական-քաղաքական զարգացումներին: Սակայն այդ եւ դրան հաջորդող ժամանակահատվածը, չնայած առանձին փորձերին, առաջօր համալիր չի ուսումնասիրվել: Մասամբ դա հետեւանք է նրա, որ Երրորդ հանրապետության ձեւավորումով Հայաստանը դուրս եկավ կայսերական գիտակրթական եւ մշակութային տարածքից: Դա հանգեցրեց նման պարագաներում գրեթե անխուսափելի մեկուսացմանը եւ հանրության աշխարհընկալման նկատելի նեղացմանը: Որպես հետեւանք՝ մեր հասարակությունում այսօր էլ միշտ չէ, որ համարժեք են գնահատվում տեղայնական տրամաբանությունից դուրս երեւոյթները: Թերեւս դա է պատճառը, որ դեռ օբյեկտիվորեն չի շարադրվել եւ գնահատվել Երկրորդ հանրապետության ու Երրորդի

ծեւավորման բարդ եւ հակասական, սակայն հետաքրքրիւր եւ ուսանելի պատմութիւնը:

Ներկայումս ՁԼՄ-ում կարելի է հանդիպել խորհրդային շրջանին վերաբերող գլխավորապէս «ողբերգական» կամ «հեզնական» նյութերի եւ «անցյալի ճիրաններից» ազատվելու կոչերի, որոնց ձեւը, ոգին եւ «սեւ-սպիտակ» կարծրատիպերը զարմանալիորեն հիշեցնում են բուլշեւիկյան «ագիտաբուրձ»: Տարբեր պատճառներով բավարար չեն ուսումնասիրված «պերեստրոյկայի» տարիների շարժումը, հայ-ադրբեջանական պատերազմը եւ ՀՀ ու ԼՂՀ ներկայիս զարգացման ժամանակաշրջանը:

Պետք է նաեւ ընդունել, որ այսօր մեր պատմության այդ հատվածը համալիր վերլուծելու փորձեր են արվում. լույս են տեսնում, օրինակ, առանձին ուշագրավ հետազոտություններ եւ հիշողություններ: Սակայն, նման տիպի գրականությունը, տիրաժների փոքրության, համապատասխան PR-ի (ինչը ներկայումս պարտադիր է) բացակայության եւ ընդհանրապէս կարդալու մշակույթի մասնակի կորստի հետեւանքով, չի ամրագրվում հանրության, հատկապէս երիտասարդության գիտակցությունում:

Սակայն վերադառնանք «բեռլինյան պատին»:

Վերջին քսան տարում ՁԼՄ-ում եւ փորձագիտական գրականությունում կարելի է հանդիպել «պատի» փլուզման բազմաթիվ վարկածների: Դրանց զգալի մասը բավական ուշագրավ է, սակայն ընդամենը թույլ է տալիս վերլուծաբանական հանրությանը եւս մեկ անգամ փաստել այն իրողությունը, որ «սոցճամբարի» կազմալուծման գլոբալ երեւոյթը չէր կարող տեղի ունենալ ընդամենը մեկ հանգամանքի պատճառով:

Արտաքին եւ ներքին գործոններ. «Համակարգի» փլուզման «արտաքին» պատճառներից հիմնականն, իհարկե, «Սառը պատերազմում» ԱՄՆ եւ նրա դաշնակիցների համակարգված եւ հետեւողական ռազմաքաղաքական, տնտեսական (բավական է հիշել նավթի գների արհեստական անկումը) եւ ագիտացիոն-պրոպագանդիստական պայքարն էր ԽՍՀՄ-ի եւ «սոցճամբարի» դեմ, որն էլ ավարտվեց վերջիններիս պարտությամբ: Միեւնույն ժամանակ, հատկապէս ռուսաստանյան պատմագիտական որոշ շրջանակներում, համակարգի կազմալուծումը երբեմն մեկնաբանվում է որպէս «պերեստրոյկայի» փուլում արեւմտյան հատուկ ծառայությունների եւ նրանց կողմից հավաքագրված «ազդեցության գործակալների» գործունեության արդյունք:

Փաստագրական հենք ունեցող այդ դիտարկումներից հետեւում է, որ «փլուզման» գործում հատուկ ծառայություններն իրոք կարելուր դերակատարում են ունեցել: Կան, օրինակ, հստակ վկայություններ, որ

խորհրդային ղեկավարության ամենաբարձր մակարդակում եղել են ԽՍՀՄ-ի դեմ եւ ի շահ ԱՄՆ-ի գործող անձինք: Հատկապես արդյունավետ է գործել այսպես կոչված «Ոսկե ավանակ»¹ տեխնոլոգիան, որը ենթադրում է անհրաժեշտ քաղաքական գործիչների կաշառումը եւ ուղղորդումը:

Այդ ամենի համատեքստում արեւմտյան գործիչների հրապարակային ելույթները, թե իրենց համար այն տարիների գործընթացները «անսպասելի էին», համոզիչ չեն հնչում. առանց մամուլի ներկայացուցիչների նրանք այլ կերպ են արտահայտվում: Օրինակ, 1995թ. ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնը շտաբների պետերի հետ «փակ» խորհրդակցության ժամանակ ասել է հետեւյալը. «Վերջին տասը տարում ԽՍՀՄ-ի դեմ վարած քաղաքականությունն ապացուցեց, որ աշխարհի հզոր տերություններից մեկի վերացմանն ուղղված կուրսը ճիշտ էր... Օգտագործելով խորհրդային դիվանագիտության սխալները, Գորբաչովի եւ նրա շրջապատի ավելորդ ինքնավստահությունը, այդ թվում նաեւ նրանց, ովքեր բացահայտորեն ամերիկամետ դիրք զբաղեցրին, մենք հասանք նրան, ինչ պատրաստվում էր անել Միացյալ Նահանգների նախագահ Թրումենը ԽՍՀՄ-ի հետ ատոմային ռումբի միջոցով»: Պետք է կարծել, որ արտաքին ազդեցության հիշատակված մեթոդները, անշուշտ՝ ավելի փոքր չափերով, կիրառվել են նաեւ այն տարիների հայաստանյան զարգացումներում, եւ չի կարելի բացառել, որ նման գործելակերպը շարունակվում է:

Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդունել, որ «արեւմտյան» կողմն ի վերջո գործում էր իր ռազմավարական շահերին համապատասխան, ու մեղադրանքներն ընդհանրական Արեւմուտքի հասցեին գուցե եւ հասկանալի են զգացնումքային առումով, սակայն այնքան էլ արդարացված չեն. «պայմանական հակառակորդը» գործում էր պատերազմական օրենքների համաձայն:

Նկատենք նաեւ, որ բացի Արեւմուտքից եւ «ազդեցության գործակալներից», խորհրդային հանրության զգալի մասը նույնպես անկեղծորեն ցանկանում էր փլուզել գոյություն ունեցող համակարգը: Այսինքն՝ անհնարին է համաձայնել այն տեսակետի հետ, թե ԽՍՀՄ տրոհումը տեղի ունեցավ զուտ «արտաքին գործոնի» հետեւանքով: Դրա համար կային անհրաժեշտ բոլոր «ներքին» նախապայմանները:

Խորհրդային համակարգը ստեղծվեց հեղափոխական բռնության արդյունքում եւ զանգվածային «տեռորը» սեփական ժողովրդի դեմ, տարբեր ուժգնությամբ, ձեւերով ու բովանդակությամբ, տեւեց մինչեւ Ստալինի մահը: «Ռեպրեսիաներին» զուգահեռ ոչնչացվեց նաեւ հոգեւոր-մշակութային արժեքների մի մեծ շերտ, որը դարերի ընթացքում ձեւավորվել էր բազմազգ Ռուսական կայսրությունում:

Հայտնի է, որ հետստալինյան շրջանում «համակարգը» ընդամենը մեղմվեց, եւ «ազգային» ու «մարդկային» գործոնները նախկինի պես մնում էին չարժեւորված: «Պերեստրոյկան» թույլ տվեց ինչպես ողջ խորհրդային հասարակությանը, այնպես էլ ազգային խնդիրներ ունեցող հանրապետությունների բնակչությանը, արտահայտել տասնամյակներով կուտակված իր բողոքը: «Համակարգից» դժգոհություն ուներ նաեւ ԽՍՀՄ կուսակցական «նոմենկլատուրայի» մի զգալի մասը: Ելնելով այդ իրողություններից՝ նկատենք, որ օտարերկրյա հատուկ կառույցների հետ համագործակցությունը ոմանց կողմից երբեմն անկեղծորեն դիտարկվում էր որպես յուրահատուկ քաղաքացիական սխրանք:

Խորհրդային կարգերի դեմ այդ համընդհանուր բողոքն էր, որը ռեզոնանսի մեջ մտնելով «արտաքին» ազդեցության հետ՝ փլուզեց համակարգը: Հատկանշական է, որ «փլուզումը» տեղի ունեցավ, երբ սկսվեց տեղեկատվական հեղափոխության դարաշրջանը. ստեղծված նոր իրադրությունում արդեն անհնարին էր պատկերացնել մեկուսացված համակարգեր, ինչպիսին էր ԽՍՀՄ-ը:

Համակարգից դուրս հանրություն. Հայտնի է, որ անգամ բռնապետություններում ստեղծագործ հանրությունները գտնում են իրենց ինքնարտահայտման ձևերը: Մեր պարագայում դրան մեծապես նպաստում էր այն, որ հզոր խորհրդային տերություն ստեղծելու տեսլականը եւ գաղափարական գործոնի կարելուումը թելադրում էին կոմունիստական ղեկավարությանը ստեղծել զարգացած ու լայնածավալ ռազմարդյունաբերական, գիտակրթական եւ մշակութային ամբողջական համալիր: Արդյունքում՝ ԽՍՀՄ-ը վերածվեց գիտության, տեխնոլոգիաների եւ մշակույթի ոլորտներում բարձր մակարդակ ունեցող երկրի, որի հենքի վրա կազմավորվեց խոր գիտելիքներ եւ հոգեւոր արժեքներ կրող մտավորականության ստվար զանգված: Օգտվելով խրուշչովյան «ձնհալից» եւ մասնակի բարեփոխումներից՝ այդ ստեղծագործ ընտրանին կարծես թե իր վրա վերցրեց խորհրդային ժողովրդի հոգեւոր առաջնորդը լինելու առաքելությունը:

Հասարակության բավական մեծ հատվածի համար անհամեմատ ավելի կարելու էին ոչ թե կուսակցական առաջնորդների ճառերը կամ համագումարների թեզերը, այլ հեղինակություն վայելող գիտնականների, գրողների մտքերը եւ խոսքերը, հաջողված գրքերը եւ կինոֆիլմերը: Որոշակի դերակատարում էին ձեռք բերել «դիսիդենտական» եւ ազգային շարժումները. շատերը, չնայած հետապնդումներին, տարածում եւ կարդում էին այսպես կոչվող «самиздат»-ն ու «тамиздат»-ը: Հատկանշական

է, որ նախկինում պախարակվող եւ անեկդոտների հերոս դարձած խորհրդային մարդու (homo soveticus) արժեհամակարգն այսօր բավական բարձր է գնահատվում: Որոշ հոգեւոր հայրեր այսօր անգամ համոզված են, որ աթեիստական ԽՍՀՄ քաղաքացիները հաճախ ավելի մոտ էին քրիստոնեական արժեքներին եւ հասկացություններին, քան ներկայիս «խղճի եւ դավանանքի ազատության» պայմաններում ապրողները: Այդ համատեքստում կարելի է ասել, որ հետեւելով «ստրուկին իր միջից քամելու» հետխորհրդային կարգախոսին՝ հանրությունը «իրենից դուրս հանեց» նաեւ որոշ շատ արժեքավոր հատկանիշներ:

Սակայն այդ ամենի հետ մեկտեղ խորհրդային հանրության «բողոքող» հատվածի քաղաքական աշխարհընկալումն ավելի քան միամիտ էր եւ պարզունակ: Որպես կոմունիստական ռեժիմի միակ այլընտրանք՝ պատկերացվում էր իդեալականացված «ազատ աշխարհը», եւ անգամ ամենափոքր թերահավատությունը «Արեւմուտքի» հանդեպ ընդունվում էր որպես պաշտոնական քարոզչության արտահայտություն կամ առնվազն՝ մոլորություն: Ըմբռնումը, որ արեւմտյան մոդելը նույնպես յուրովի «համակարգ» է եւ բավական անողոք, եկավ արդեն հետո: Հատկանշական է, որ հանրային մակարդակով այդ իրողությունն ընդունեցին հատուկենտ խորհրդային «դիսիդենտներ». շատերի համար նման խոստովանությունը, սեփական արմատացած պատկերացումների վերանայումն ու վերհիմաստավորումը պետք է որ հոգեբանորեն ծանր լինեին:

Հետեւանքներ եւ հնարավոր հեռանկարներ. ԽՍՀՄ ու «սոցճամբարի» փլուզումն ընթացավ դասական հեղափոխական ռեժիմով եւ դրանից բխող ծանր հետեւանքներով. ազգամիջյան պատերազմներ, փախստականներ, հանցագործության կտրուկ աճ, կառավարման համակարգի տրոհում, տնտեսության եւ կենսամակարդակի շեշտակի անկում, գիտաարդյունաբերական եւ մշակութային ենթակառուցվածքի կազմալուծում եւ, գլխավորը, հանրության բարոյալքում: Կարծում ենք, որ անփոյթ կազմակերպված «պերեստրոյկան» «նոմենկլատուրայի» կատարած ծանր հանցագործություններից էր: Անշուշտ, բարեփոխումները կարելի էր կատարել ավելի մտածված եւ չկորցնել խորհրդային տերության տասնամյակների ընթացքում կուտակած հոգեւոր, մտավոր եւ նյութական հսկայական արժեքներն ու ներուժը: Հայտնի է, որ այդ ամենից չխուսափեց նաեւ Հայաստանը:

Միեւնույն ժամանակ, «սոցիալիզմի» փլուզումը որոշակիորեն բացասաբար ազդեց նաեւ հաղթանակած «ազատ աշխարհի» վրա: Դժվար է չհամաձայնել արեւմտյան այն հետազոտողների հետ (որոնց թվում է նաեւ

հանրահայտ Իմանուիլ Վալերսթայնը), որ հետխորհրդային իրողություններում համակարգերի մրցակցության բացակայությունը որոշակիորեն կազմալուծեց Արեւմուտքը եւ հանգեցրեց «պոստմոդեռնիստական» ամենաթողությանը:

Ուշագրավ է, որ արդի գրեթե համընդհանուր «ժողովրդավարական», բայց եւ այնպես ոչ այնքան «ազատ» աշխարհում ձեւավորվում է մի նոր «այլախոհական» շարժում: Ժամանակակից դիսիդենտները հաճախ հասարակությունում բարձր դիրքեր զբաղեցնող մտավորականներ եւ երբեմն անգամ պետական գործիչներ են: Հատկանշական է, որ քաղաքական-գաղափարախոսական հարթությունում վերստին շրջանառվում են սոցիալիստական հիմնադրույթները՝ նորովի խմբագրված: Այս ամենը վկայում է այն մասին, որ «համակարգային փլուզման» երեւոյթները կարող են եւ ապագայում կրկնվել, սակայն այս անգամ՝ անհամեմատ ավելի գլոբալ մասշտաբներով:

¹ Այս արտահայտությունը վերագրվում է Ֆիլիպ Մակեդոնացուն, որը մի առիթով ասել է, թե քաղաքները գրավելու համար պետք է ուղարկել ոչ թե զինվորներ, այլ «ոսկով բեռնված ավանակներ»՝ հակառակորդին «զնելու» համար:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԵՆԻՀԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2000թ. Վլադիմիր Պուտինի՝ Ռուսաստանի նախագահ ընտրվելուց հետո պաշտոնական Մոսկվան բազմիցս իր դժգոհությունն է արտահայտել ԽՍՀՄ փլուզումից հետո Եվրոպայում ձեւավորված անվտանգության նոր համակարգի վերաբերյալ: Ռուսական կողմի անհամաձայնությունն ավելի ակնբերել դարձավ ՆԱՏՕ՝ դեպի արեւելք շարունակական ընդարձակման եւ նախկին խորհրդային հանրապետություններում ԱՄՆ ազդեցության հաստատման գործընթացի ֆոնին: Եվրոպական անվտանգության համակարգում Ռուսաստանի դերակատարման նվազեցմանը միտված Արեւմուտքի քաղաքականության շրջանակներում էր Ռուսաստանը դիտարկում նաեւ Վրաստանում եւ Ուկրաինայում իրականացված գունավոր հեղափոխությունները:

Եթե 2000 – 2005թթ. Ռուսաստանի նոր իշխանությունները հիմնական ուշադրությունը կենտրոնացրել էին երկրի ներսում պետության դերի ամրապնդման, Հյուսիսային Կովկասում անջատողական շարժումների ճնշման եւ իշխանության ուղղահայաց համակարգի ձեւավորման վրա, ապա սկսած 2006թ. նրանք ձեռնամուխ եղան միջազգային ասպարեզում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը:

«Սառը պատերազմի» ավարտից հետո Եվրոպայում ձեւավորված նոր աշխարհակարգի առաջին բացահայտ քննադատությունը հնչեց Պուտինի՝ 2007թ. փետրվարին միջազգային անվտանգության հիմնախնդիրներին նվիրված Մյունխենի 43-րդ համաժողովում ունեցած ելույթում: Ռուսաստանի նախագահը հստակ հայտարարեց, որ միաբեւեռ աշխարհն անընդունելի է պաշտոնական Մոսկվայի համար, քանի որ այն ենթադրում է որոշումների ընդունման մեկ կենտրոնի գոյություն, որին պետք է ենթարկվեն մնացած բոլոր պետությունները: Շեշտելով, որ միաբեւեռ աշխարհը վտանգավոր է միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցների համար, Պուտինը նշեց, որ այն հակասում է նաեւ Արեւմուտքի կողմից տարփողվող ժողովրդավարության գաղափարին: Ռուսաստանի նախագահն ուղղակի մեղադրանք ներկայացրեց Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ միջազգային իրավունքի նորմերը խախտելու եւ միակողմանի գործողություններ իրականացնելու մեջ,

որոնք միանշանակ հանգեցնում են բացասական հետեւանքների:

Վերլուծաբանների կողմից նոր «Սառը պատերազմի» հնարավոր սկիզբ որակված Պուտինի այս ելույթն Արեւմուտքին ուղղված լուրջ նախազգուշացում էր՝ միջազգային անվտանգության նոր համակարգից Ռուսաստանի դժգոհության վերաբերյալ: Միաժամանակ ակնհայտ էր, որ պաշտոնական Մոսկվան չի սահմանափակվելու միայն խոսքերով, այլ իրականացնելու է կոնկրետ գործողություններ՝ ստեղծված իրավիճակը սեփական շահերին համապատասխան փոփոխելու համար: Այդ նպատակին ուղղված կարելու նախաձեռնություններից մեկը Եվրոպական անվտանգության նոր պայմանագրի ստորագրման առաջարկն է: Առաջին անգամ այս մասին պաշտոնապես հայտարարեց Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը՝ 2008թ. հունիսին Բեռլինում Գերմանիայի քաղաքական եւ հասարակական նշանավոր գործիչների հետ հանդիպման ընթացքում: Նշելով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Եվրոպայում չի ձեւավորվել միասնական անվտանգության նոր համակարգ եւ ոչ ԵԱՀԿ-ն, ոչ էլ ՆԱՏՕ-ն չեն կարող ստանձնել մնացած համակարգի բոլոր գործառույթները, Մեդվեդեւն առաջարկեց ստորագրել իրավական պարտադիր ուժ ունեցող Եվրոպական անվտանգության նոր պայմանագիր: Ռուսաստանի նախագահն առաջարկեց նաեւ իրավիճակը համաեվրոպական գագաթաժողով՝ նոր պայմանագրի շուրջ քննարկումներ ծավալելու համար՝ շեշտելով, որ այդ համաժողովին պետք է մասնակցեն Եվրոպայի բոլոր պետությունները: Միաժամանակ Մեդվեդեւը հայտարարեց, որ անհրաժեշտ է ձեւավորել միասնական եվրատալանտյան համակարգ, որը կընդգրկի Վանկուվերից մինչեւ Վլադիվոստոկ ընկած տարածաշրջանը: Այդ նոր համակարգի հիմնասյունները պետք է լինեն Ռուսաստանը, Յուրսիսային Ամերիկան եւ Եվրամիությունը, որոնց միջեւ պետք է ձեւավորվի իրավահավասար համագործակցություն:

Եվրոպական անվտանգության շուրջ նոր պայմանագիր ստորագրելու այս առաջարկն առաջին հերթին ուղղված էր Եվրոպայում ԵԱՀԿ եւ հատկապես ՆԱՏՕ դերակատարման նվազեցմանը, ինչպես նաեւ հյուսիսատլանտյան դաշինքի՝ դեպի արեւելք հետագա ընդլայնման կանխմանը: Չարկ է փաստել, որ Ռուսաստանը, առնվազն սկսած 2000թ. խիստ բացասական դիրքորոշում ունի ԵԱՀԿ-ի նկատմամբ, եւ այդ մասին հստակ նշել էր նաեւ Պուտինը մյուսխեսնյան ելույթում՝ հայտարարելով, որ ԵԱՀԿ-ն վերածվել է մի քանի պետությունների կողմից սեփական արտաքին քաղաքական շահերն առաջ մղելու եւ այլ պետությունների ներքին գործերին միջամտելու գործիքի:

Մեդվեդեւի Բեռլինում ունեցած ելույթը հակասական գնահատական-

ների արժանացավ արեւմտյան վերլուծաբանների եւ հասարակական-քաղաքական գործիչների կողմից: Նրանց մի մասը գտնում էր, որ անհրաժեշտ է միանշանակ բացասական գնահատական տալ այս նախաձեռնությանը, որի հիմնական նպատակը միջազգային ասպարեզում Ռուսաստանի դիրքերի ուժեղացումն է՝ ի հաշիվ արեւմտյան պետությունների, մյուսները նշում էին, որ կտրուկ հայտարարություններ կատարելու անհրաժեշտություն չկա եւ պետք է սպասել Ռուսաստանի կողմից պայմանագրի նախագծի հրապարակմանը:

2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմը, դրան հաջորդած Ռուսաստան – Արեւմուտք հարաբերություններում նկատվող սառնությունը, 2008թ. վերջին սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը որոշակի ժամանակահատված կարծես թե երկրորդ պլան մղեցին Եվրոպական անվտանգության նոր պայմանագրի ստորագրման Մոսկվայի առաջարկը: Սակայն վերջին ամիսներին ռուսական իշխանությունները կրկին ակտիվորեն շրջանառության մեջ դրեցին այդ գաղափարը: 2009թ. սեպտեմբերի 10-ին հրապարակված «Առաջ, Ռուսաստան» հոդվածում անդրադառնալով երկրի արտաքին քաղաքական հիմնախնդիրներին՝ Դմիտրի Մեդվեդեւը նշում է, որ Ռուսաստանը մտադիր է ապագայում ակտիվ դերակատարություն ստանձնել միջազգային հարաբերություններում եւ կանխել ցանկացած պետության միակողմանի որեւէ գործողություն՝ ուղղված Ռուսաստանի ազգային շահերի դեմ: Այդ նպատակին հասնելու համար պաշտոնական Մոսկվան մտադիր է այլ պետությունների հետ միասին քայլեր ձեռնարկել միջազգային կառույցների բարեփոխման ուղղությամբ: Մեդվեդեւն այդ բարեփոխումների հիմնական նպատակ էր հռչակում հնարավորինս մեծ թվով պետությունների շահերը հաշվի առնող նոր համակարգի ձեւավորումը:

Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը եւ Եվրոպական անվտանգության նոր պայմանագրի ստորագրման առաջարկին Ռուսաստանի նախագահն անդրադարձավ նաեւ 2009թ. նոյեմբերի 12-ին Ռուսաստանի Դաշնային ժողովին ուղղված ամենամյա ուղերձում: Շեշտելով այն հանգամանքը, որ եվրաստլանտյան տարածաշրջանում ձեւավորված անվտանգային ճարտարապետության գործող համակարգը չի համապատասխանում առկա պահանջներին եւ ի վիճակի չէ արդյունավետորեն կանխել ճգնաժամերի առաջացումը, ինչն ապացուցեցին նաեւ 2008թ. օգոստոսի իրադարձությունները, Ռուսաստանի նախագահը հայտարարեց անվտանգությանն առնչվող նոր պայմանագրի ստորագրման անհրաժեշտության մասին: Մեդվեդեւը հատուկ ընդգծեց, որ պաշտոնական Մոսկվայի այս առաջարկն ուղղված չէ Հյուսիսատլանտյան դաշինքի դեմ

Եւ միաժամանակ ավելացրեց, որ ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Եվրաստլանտյան տարածաշրջանի մի շարք այլ պետություններ չեն անդամակցում ՆԱՏՕ-ին, եւ վերջինս պարզապես ի վիճակի չէ ինքնուրույն լուծել առկա բոլոր խնդիրները: Մեղվեղելը նշեց, որ ռուսական նոր առաջարկի հիմքում ընկած է անվտանգության անբաժանելիության գաղափարը: Ոչ մի պետություն չպետք է ապահովի սեփական անվտանգությունն այլ պետությունների անվտանգության հաշվին: Միաժամանակ, Ռուսաստանի նախագահը եւս մեկ անգամ հայտարարեց, որ պաշտոնական Մոսկվայի արտաքին քաղաքականությունն ուղղված է բազմաբեւեռ միջազգային համակարգի ձեւավորմանը, որտեղ համակարգի բոլոր տարրերը հավասար հնարավորություններ կունենան սեփական շահերի պաշտպանության համար:

Ակնհայտ է, որ Եվրոպական անվտանգության մասին նոր պայմանագրի առաջարկի հիմնական նպատակը Եվրաստլանտյան տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի ուժեղացումն է եւ ԱՄՆ ու ՆԱՏՕ ազդեցության սահմանափակումը: Այս մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ Ռուսաստանն առաջարկում է պայմանագրի կողմ դարձնել ոչ միայն առանձին պետությունների, այլեւ միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՆԱՏՕ-ին, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), ԵԱՀԿ-ին, Եվրամիությանը եւ ԱՊՀ-ին: Այստեղ առաջին հերթին կարելու է ՆԱՏՕ-ն եւ ՀԱՊԿ-ն պայմանագրի հավասարազոր կողմեր դիտարկելու Ռուսաստանի մտադրությունը: Պաշտոնական Մոսկվան արդեն վաղուց է փորձում ուղղակի եւ իրավահավասար հարաբերություններ հաստատել այս երկու ռազմաքաղաքական դաշինքների միջեւ՝ միջազգային հարաբերություններում հավասար դերակատարում ապահովելու համար: Դեռեւս 2004թ. հունիսին ՀԱՊԿ՝ Աստանայում կայացած զագաթաժողովի ընթացքում կազմակերպությունը հատուկ հռչակագիր ընդունեց, որով ՆԱՏՕ-ին կոչ էր արվում իրավահավասար համագործակցություն հաստատել՝ երկու կազմակերպությունների առջեւ ծառայած մարտահրավերներին հաջողությամբ պատասխանելու համար: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության կարելուրությունը ՀԱՊԿ-ի համար հատկապես ընդգծվեց նույն 2004թ. Հյուսիսատլանտյան դաշինքի Ստամբուլի զագաթաժողովից հետո, որտեղ ՆԱՏՕ-ն սեփական ռազմավարական շահերի տիրույթ հայտարարեց նաեւ Հարավային Կովկասն ու Կենտրոնական Ասիան: Ակնհայտ է, որ ՆԱՏՕ-ն խուսափում է ՀԱՊԿ-ի հետ ուղղակի հարաբերությունների հաստատումից՝ նախընտրելով կոնկրետ պետությունների հետ ուղղակի շփումների հաստատումը «Համագործակցություն հանուն խաղաղության», «Անհա-

տական գործակցության գործողությունների ծրագրի» եւ այլ ձեւաչափերի շրջանակում:

Ռուսաստանի կողմից առաջարկվող անվտանգության նոր պայմանագրի նախագծի տեքստը պաշտոնապես հրապարակվեց 2009թ. նոյեմբերի 29-ին: Պայմանագիրը հենվում է ՄԱԿ կանոնադրության, 1975թ. Յելսինկյան եզրափակիչ ակտի, 1982թ. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին Մանիլայի հռչակագրի եւ 1999թ. Եվրոպական անվտանգության հռչակագրի սկզբունքների վրա: Պայմանագրի հիմքում ընկած է հետեւյալ գաղափարը. ոչ մի պետություն չպետք է ձեռնարկի քայլեր, որոնք սպառնում են պայմանագրի անդամ այլ պետությունների անվտանգությանը: Առանձնահատուկ շեշտվում է միջպետական հարաբերություններում ուժի կիրառման կամ դրա կիրառման սպառնալիքի անթույլատրելիության մասին:

Պայմանագրի անդամ որեւէ պետության հանդեպ սպառնալիքի առկայության դեպքում պայմանագիրը նախատեսում է երկկողմ կամ բազմակողմ խորհրդակցությունների, պայմանագրի մասնակիցների խորհրդաժողովի եւ արտահերթ խորհրդաժողովի անցկացման մեխանիզմներ: Պայմանագրի մասնակիցների խորհրդաժողովի հրավիրման համար անհրաժեշտ է համարվում առնվազն երկու մասնակցի համապատասխան առաջարկը: Խորհրդաժողովի գումարման համար անհրաժեշտ է մասնակից անդամների առնվազն երկու երրորդի ներկայությունը: Խորհրդաժողովի որոշումներն ընդունվում են կոնսենսուսի հիման վրա եւ պարտադիր են կատարման համար: Պայմանագրի ցանկացած մասնակցի դեմ զինված հարձակման դեպքում անհապաղ հրավիրվում է արտահերթ խորհրդաժողով: Արտահերթ խորհրդաժողովն իրավասու է որոշումներ կայացնել, եթե ներկա է պայմանագրի մասնակիցների առնվազն չորս հինգերորդը: Արտահերթ խորհրդաժողովի որոշումները եւս ընդունվում են կոնսենսուսի հիման վրա եւ պարտադիր են կատարման համար: Այն դեպքում, եթե զինված հարձակումն իրականացվել է պայմանագրի մասնակից պետության կողմից, ապա վերջինս զրկվում է որոշումների ընդունման ժամանակ ձայնի իրավունքից: Պայմանագրի նախագծի համաձայն, պայմանագրի որեւէ մասնակցի դեմ իրականացված զինված հարձակման դեպքում պայմանագրի ցանկացած այլ մասնակից իրավունք ունի դա գնահատել որպես հարձակում իր վրա եւ իրավասու է այդ մասնակցին տրամադրել ցանկացած, այդ թվում նաեւ ռազմական օգնություն՝ սեփական գործողությունների մասին անհապաղ տեղյակ պահելով ՄԱԿ Անվտանգության խորհրդին: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում առնվազն 25 մասնակցի կողմից վավերացվելուց տասն օր հետո:

Ռուսաստանը պայմանագրի նախագիծն ուղարկել է եվրաստլանտյան տարածաշրջանի բոլոր պետություններին, ինչպես նաև ԵԱՀԿ-ին, Եվրամիությանը, ԱՊՀ-ին, ՀԱՊԿ-ին եւ ՆԱՏՕ-ին, որոնք նույնպես կարող են անդամակցել պայմանագրին: Պայմանագրի նման տեսքով վավերացման դեպքում Ռուսաստանն զգալիորեն կամրապնդի դիրքերը ողջ տարածաշրջանում: Միաժամանակ կնվազի թե՛ ԵԱՀԿ եւ թե՛ ՆԱՏՕ դերակատարությունը՝ որպես եվրաստլանտյան տարածաշրջանում անվտանգության ապահովման փաստացի միակ գործիքների: ՀԱՊԿ եւ ՆԱՏՕ, ԵԱՀԿ ու ԱՊՀ հավասար հիմունքներով անդամակցումը պայմանագրին հնարավորություն կտա Ռուսաստանին առնվազն ԱՊՀ տարածքում սահմանափակել ՆԱՏՕ եւ ԵԱՀԿ ազդեցությունը՝ այստեղ որպես անվտանգության հիմնասյուներ դիտարկելով ՀԱՊԿ-ը եւ ԱՊՀ-ն:

Պայմանագրի տեքստի հրապարակմանը արեւմտյան առաջատար պետությունները բավականաչափ զգուշորեն են արձագանքել: ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում նկատվող որոշակի նորմալացումը, Աֆղանստանում անընդհատ բարդացող իրավիճակում ՆԱՏՕ-ի առջեւ ծառայած մարտահրավերների հաղթահարման խնդրում Ռուսաստանի աջակցության կարելիությունը այն գործոնների թվում են, որոնք կանխարգելիչ դեր են կատարում ռուսական առաջարկի կտրուկ մերժման համար: 2010թ. ԵԱՀԿ-ում նախագահությունը ստանձնող Ղազախստանը եւս հակված է ակտիվացնել ռուսական այս առաջարկի շուրջ քննարկումները: Միաժամանակ, ակնհայտ է, որ արեւմտյան պետությունները շահագրգռված չեն նշված տեսքով պայմանագրի ստորագրման հարցում: Եվրոպական անվտանգության նոր պայմանագրի նախագծի շուրջ առաջին քննարկումներն անցկացվեցին 2009թ. դեկտեմբերի 4-ին Բրյուսելում կայացած Ռուսաստան–ՆԱՏՕ խորհրդի հերթական նիստի ընթացքում: ՆԱՏՕ անդամ պետությունները հայտարարել են ռուսական առաջարկների քննարկման պատրաստակամության մասին: Միաժամանակ ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Անդերս Ռասմուսենը նիստից հետո կայացած մամուլի ասուլիսի ընթացքում նշել է, որ ՆԱՏՕ անդամ պետությունները պայմանագրի նախագծի շուրջ քննարկումները նախընտրում են անցկացնել ԵԱՀԿ շրջանակներում, մինչդեռ ռուսական կողմը պնդում է 2010թ. այս խնդրով առանձին զագաթաժողովի հրավիրման անհրաժեշտությունը:

Ամենայն հավանականությամբ, եվրոպական անվտանգության պայմանագրի նախագծի շուրջ ընթացող քննարկումներն առաջիկայում կշարունակվեն, սակայն լուրջ առաջընթացի հավանականությունն այս խնդրում բավականաչափ փոքր է:

ԻՐԱՆ. ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սեւակ Սարուխանյան

2009 թվականը Իրանի հետհեղափոխական պատմության մեջ ամենակարեւոր տարիներից մեկը կարող է համարվել: Ներքաղաքական ճգնաժամը, արտաքին քաղաքականության ոլորտում իրանա-ամերիկյան հարաբերությունների հնարավոր կարգավորման հետաձգումը, միջուկային հիմնախնդրում սեփական դիրքերի պահպանումն ու շարունակական ամրապնդումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Իրանի հետագա իրավիճակի եւ կարգավիճակի վրա: Հոդվածում անդրադարձ է կատարվում 2009թ. ընթացքում Իրանի համար, մեր կարծիքով, կարեւոր զարգացումներին:

Քաղաքական ճգնաժամը եւ նոր ընդդիմության ձեւավորումը

Նախագահական ընտրություններն արձանագրեցին իսլամական հեղափոխության տարիներից հետո ամենասուր քաղաքական ճգնաժամի սկիզբն Իրանում: Բախումներն ընդդիմադիրների եւ անվտանգության ուժերի միջեւ, մահվան դեպքերը, հետագա ձերբակալությունները, ի վերջո, հանգեցրին նրան, որ Մ.Յ. Մուսավիի շուրջ նոր քաղաքական դաշտ ձեւավորվեց, որն առաջիկա տարիներին ինստիտուցիոնալացման կարեւոր փուլ կանցնի: Շարունակվող բախումները ցուցարարների եւ ոստիկանության ուժերի միջեւ կարող են երկարաժամկետ բնույթ ունենալ, քանի որ դրանք քաղաքականապես եւ բարոյապես սպասարկում են Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանի, Մ.Յ. Մուսավիի, Մ.Խաթամիի եւ նախկին ու ներկա հարյուրավոր բարձրաստիճան գործիչների կողմից ղեկավարվող շարժումը, որի հեռավոր նպատակը պահպանողականների հեռացումն է իշխանությունից: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե հեղափոխության, այլ հեղաշրջման մասին է, որի համար առաջիկա տարիներին ներքին եւ արտաքին հարմար ազդակներ կարող են առաջ գալ:

Որպես հիմնական ներքին ազդակ անհրաժեշտ է նշել Իրանի նոր հոգեւոր առաջնորդի հնարավոր ընտրությունը, որպես արտաքին՝ ԱՄՆ-ի կամ Իսրայելի կողմից հնարավոր հարվածն Իրանին: Նշենք, որ երկրորդի հնարավորությունն այսօր աստիճանաբար աճում է՝ հաշվի առնելով այն, որ Թեհրանն անընդմեջ տապալում է ԱԵՄԳ-ի եւ «վեցնյակի» հետ

բանակցությունները: Եթե մեկ կամ երկու տարի առաջ դժվար էր ասել, որ ամերիկյան կամ իսրայելական օդուժի հարվածն Իրանի միջուկային կառույցներին ներքաղաքական անկայունության կամ հեղաշրջման փորձի կհանգեցնի, ապա անցած նախագահական ընտրություններից հետո ձեւավորված եւ քաղաքական ու հոգեւոր շրջանակներում ամուր դիրքեր ունեցող ընդդիմադիր կենտրոնի ձեւավորումից հետո նման բան ասելու հնարավորությունն առկա է: Իհարկե, սա չի նշանակում, թե Իրանում ներքաղաքական անկայունության հետեւում կանգնած են արտաքին ուժերը: Սակայն փաստ է, որ վերջիններիս համար այս անկայունությունը դրական հետեւանքներ կունենա: Խոսքն այդ թվում ԱՄՆ-ի մասին է, որը նոր նախագահի օրոք եւս շարունակում է հակամարտությունն Իրանի հետ:

Իրան – ԱՄՆ հարաբերությունները

2009-ը վերջնականապես բացահայտեց այն պարզ ճշմարտությունը, որ Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ հարաբերությունները Զ.Բուշ-կրտսերի հեռանալուց եւ ԱՄՆ նոր նախագահի ընտրվելուց հետո լուրջ փոփոխություններ չեն կրի: Չնայած ԱՄՆ նախկին վարչակազմը բացահայտ հակաիրանական քաղաքականություն էր վարում, սակայն դա արտահայտում էր ԱՄՆ բնական շահերը, որոնցից էլ հենց բխում է գերիշխանության հաստատումը Մերձավոր Արեւելքում եւ Պարսից ծոցում: Այսօր նույն տարածաշրջանում նույնպիսի գերիշխանության է ձգտում նաեւ Թեհրանը, որի իրավունքներն ու դիրքերը պակաս հիմնարար չեն, քան Վաշինգտոնինը: Այս պարագայում չի կարելի խոսել իրանա-ամերիկյան մերձեցման մասին՝ անկախ այն հանգամանքից, թե ով է նախագահում Միացյալ Նահանգներում կամ Իրանում:

Թեհրանի փողոցներում ծավալված բախումների օրերին ԱՄՆ մի շարք լրատվականներ հարց բարձրացրին. արդյո՞ք Օբաման պետք է հարաբերություններ կարգավորի այս իշխանությունների հետ: Հակաիրանական քարոզչության պայմաններում բացասական պատասխանն այս հարցին ակնհայտ էր: Սակայն պետք է նշել, որ մինչեւ նախագահական ընտրություններն Իրանում, մինչեւ բախումներն ու զոհերը, Բ.Օբամայի վարչակազմի կողմից ոչ մի իրական քայլ Իրանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ չարվեց: Արդյունքում՝ մայիսին ուրբաթօրյա աղոթքներից մեկի ժամանակ Իրանի առաջնորդ Ա.Խամենեյին Օբամայի քաղաքականության մասին ասաց. «Մարդու մասին պետք է դատել ոչ թե նրա տեսքով կամ խոսքերով, այլ մտադրություններով ու գործերով: Վերջիններս բացարձակապես չեն տարբերվում նախկինում եղածից»:

Իրանա-ամերիկյան հակամարարտությունը կշարունակվի առաջիկա տարիներին, իսկ սահմանափակ համագործակցության եւ դիրքորոշումների փոխադարձ ճշտման դաշտը երկու պետությունների միջեւ կմնա նույնը, ինչ վերջին տարիների ընթացքում՝ Իրաք եւ Աֆղանստան: Ամենայն հավանականությամբ, կողմերը ստիպված կլինեն բանակցել եւ մասամբ համագործակցել նաեւ Պակիստանի շուրջ ընթացող գործընթացներում, որոնք կարելուր են եւ Իրանի, եւ ԱՄՆ-ի համար:

Իրան – Թուրքիա հարաբերությունները

2009-ը կարելուր եղավ նաեւ Իրան – Թուրքիա հարաբերությունների զարգացման եւ խորացման տեսանկյունից: Դեռ երկու տարի առաջ Թեհրանի եւ Անկարայի միջեւ դեկլարատիվ բնույթ կրող հարաբերությունների խորացումն այս տարի իրական միս ու արյուն ստացավ: 2009-ի հունվարին Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը Բյուսելում հայտարարեց, թե անիմաստ է խոսել «Նաբուկկո» գազատարի մասին, եթե նախագծին չի մասնակցելու Իրանը. «Առանց Իրանի նախագիծն անիմաստ է»: Թուրքիայի համար, որը նպատակ ունի դառնալ տարածաշրջանի խոշորագույն էներգատրանսպորտային հանգույցը, Իրանը կարելուր նշանակություն ունի: Այս պետությունը հսկայական նավթի պաշարներ ունի, ապագայում դառնալու է ԵՄ հիմնական գազամատակարարը, նրա միջոցով մուտքը Կենտրոնական Ասիա ավելի ապահով է, քան Վրաստանի ու Ադրբեջանի միջոցով: Իրանի համար Թուրքիան, իր հերթին, կարելուր նշանակություն ունի, քանի որ իրանական գազի համար ամենակարելուր ճանապարհը դեպի ԵՄ շուկա այս պետության տարածքով է անցնում, Թուրքիան կարելուր տարածաշրջանային խաղացող է, որին ձեռնտու չէ իրավիճակի հետագա ապակայունացումն ու անկախ Քուրդիստանի ստեղծումը:

Արդյունքում՝ թուրք-իրանական հարաբերությունները 2009-ին թեւակոխեցին նոր փուլ, որը կարելի է ռազմավարական գործակցություն, իսկ Թուրքիայի վարչապետի հոկտեմբերին Թեհրան կատարած պաշտոնական այցը՝ պատմական համարել: Վերջինիս արդյունքում Իրանն ու Թուրքիան պայմանավորվեցին եւ համապատասխան համաձայնագրեր կնքեցին «Հարավային Փարս» գազի հանքավայրի համատեղ շահագործման, գազատարների եւ ավտոճանապարհների համատեղ կառուցման, թուրքական մեքենաշինական ապրանքներն Իրան ներկրելու, իրանական գազը Թուրքիա արտահանելու մասին: Բացի այդ, կողմերը պայմանավորվեցին փոխադարձ առեւտուրն իրականացնել միայն իրանական ռիալով եւ թուրքական լիրայով՝ հրաժարվելով ԱՄՆ դոլարից¹, եւ քայլեր

ծեռնարկել թուրք-իրանական սահմանից ոչ հեռու, հավանաբար Իզդիրի շրջանում, համատեղ օֆշորային արդյունաբերական գոտի ստեղծելու ուղղությամբ²:

Բացի այդ, Թուրքիան պարտավորվել է 2011-ից Իրանից տարեկան 35 մլրդ մ³ բնական գազ գնել, ինչն Անկարային թույլ կտա սեփական ուժերով եւ առանց Ադրբեջանի ու Կենտրոնական Ասիայի երկրների ապահովել «Նաբուկկո» գազատարի աշխատանքը³:

Միջուկային հիմնախնդիրը

2009թ. արդյունքում Իրանը կատարեց միջուկային հիմնախնդրի շուրջ բանակցությունների ամենակարեւոր քայլը. նոյեմբերին «պաշտոնապես եւ վերջնականապես» հրաժարվեց դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները, ինչն, իհարկե, բանակցությունները «վեցնյակի» հետ կմտցնի փակուղի, որից դուրս գալու հնարավորությունները պետք է բավական արագ փնտրվեն: Սա պայմանավորված է նրանով, որ նախագահ Մ.Ահմադինեժադի հայտարարությունը, թե Իրանը պատրաստվում է ուրանի հարստացման նոր գործարաններ կառուցել, կարող է իրավիճակն էլ ավելի սրել: Իսրայելում ակտիվացել են Իրանի միջուկային ենթակառուցվածքին հարվածելու կողմնակիցները, նրանց ձայնն ավելի լսելի եւ ընդունելի է դառնում հասարակության ու քաղաքական ուժերի տարբեր շրջանակների համար: Իհարկե, չի բացառվում, որ Մ.Ահմադինեժադը շարունակում է Իրանի համար արդեն իսկ դասական դարձած «բանակցիկ ալթերնատիվ, որքան կարող ես» քաղաքականությունը եւ նպատակ ունի ավելի շատ բան կորզել միջազգային հանրությունից ուրանի հարստացման դադարեցման փոխարեն, սակայն, միեւնույն ժամանակ, Թեհրանը մոտենում է այն շեմին, որից այն կողմ արդեն իսկ երեւում է միջուկային ռումբի հնարավոր ստեղծումը: Գալիք տարին բավական կարեւոր է լինելու Իրանի միջուկային ծրագրի համար: Բացառված չէ, որ իրադարձություններն Իրանի համար ընթանան ոչ ամենաբարենպաստ սցենարով:

Տնտեսական քաղաքականությունը

2009-ին Իրանն ընդհանուր առմամբ կարողացավ հաղթահարել համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետեւանքները: Սակայն խնդիրները երկրի ներսում բավական շատ են: Ցանկանալով խուսափել երկրի ներսում ֆինանսական լուրջ ճգնաժամից՝ իրանական ղեկավարությունը սկսեց վերաֆինանսավորել ազգային բանկերը՝ պահանջելով նրանցից հետաձգել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վարկերի մարման ժամկետները եւ շարունակել էժան վարկեր տրամադրել:

Արդյունքում՝ 2009-ի հոկտեմբերի տվյալներով իրանական բանկերում չմարված վարկերի գումարը հասավ 38 մլրդ դոլարի, ինչը լուրջ խնդիրներ կարող է առաջացնել ապագայում:

Միեւնույն ժամանակ, Իրանում 2009-ին սկսվեց պետական բանկերի մասնավորեցման կարելու գործընթացը, որը զուտ տնտեսական իմաստով նպատակ ունի մեծացնել բանկերի կապիտալացումը, դրանց մրցունակությունը եւ կառավարման արդյունավետությունը: Մասնավորապես, վաճառքի հանվեցին Mellat, Tejarat եւ Saderat բանկերի 5-ական տոկոս բաժնետոմսերը, որոնք այսօր շրջանառվում են Թեհրանի բորսայում: Մինչեւ 2010թ. մարտը եւս 8-ական տոկոս բաժնետոմսեր կհանվեն վաճառքի: Նշենք նաեւ, որ բանկերի հիմնական բաժնետերեր են դառնում իրանական քաղաքական եւ հոգեւոր ընտրանու հետ անմիջական կապ ունեցող ընկերությունները եւ անձինք:

Սակայն հեռանկարային առումով Իրանի համար կարելու իրադարձությունը հոկտեմբերի 19-ին Քիշ կղզում իրանական նավթային բորսայի բացումն էր, որի նախապատրաստական աշխատանքները կատարվում էին վերջին մի քանի տարիների ընթացքում: Չնայած առեւտուրը բորսայում դեռեւս բավական փոքր ծավալներով է ընթանում, սակայն չինական եւ հնդկական ընկերություններն արդեն իսկ ցանկություն են հայտնել 2010-ից իրանական նավթը գնել հենց իրանական բորսայից՝ առեւտուրն իրականացնելով եվրոյով եւ իրանական ռիալով: Դեռեւս պարզ չէ, թե ինչ ազդեցություն կունենա նոր նավթային բորսայի գործունեությունը համաշխարհային տնտեսության վրա, սակայն դրա գործունեության սկիզբը գոնե տեղեկատվական իմաստով արդեն իսկ հարվածում է ԱՄՆ դիրքերին, որի NYSE բորսան նավթի վաճառքի համաշխարհային առաջատարն է եւ որոշ չափով ապահովում է ԱՄՆ դոլարի գերիշխանությունը:

¹ Նույնպիսի համատեղ որոշում են կայացրել նաեւ Թուրքիան եւ Չինաստանը:

² Թուրքիայի արդյունաբերության նախարար Ն.Էրգունի խոսքերով՝ այս գոտուն կարող են միանալ նաեւ Սիրիան եւ Հայաստանը:

³ Միեւնույն ժամանակ, նոյեմբերին թուրքական կառավարությունը թույլատրեց շվեյցարական EGL (Elektrizitats-Gesellschaft Laufenburg) ընկերությանը իր տարածքով բնական գազ մերկրել Իրանից Եվրոպա:

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ «ՔՐՂԱԿԱՆ ՀԱՐՑԻ» ՇՈՒՐՋ Հայկ Գաբրիելյան

2009 թվականի հոկտեմբերի 14-ին Եվրահանձնաժողովը հրապարակեց ԵՄ անդամակցության թեկնածու երկրների վերաբերյալ տարեկան զեկույցը: Թուրքիայի կտրվածքով 1998 թվականից հրապարակվող 11-րդ զեկույցում ժողովրդավարության ուղղությամբ դրական քայլերից են համարվում քրդերեն լեզվով «TRT-6»-ի հաղորդումները, ալավիների նկատմամբ դրական նախաձեռնությունները: ԵՄ-ն ողջունում էր 2009 թվականի նոյեմբերի 10-ին թուրքական խորհրդարանում պլանավորված «Քրդական հարցի» դեմոկրատական լուծման քննարկումները, որոնց մասին Թուրքիայում խոսում էին դեռևս հուլիսից:

Այս ամենին զուգահեռ՝ Իմրալի կղզում ցմահ բանտարկված PKK առաջնորդ Աբդուլա Օջալանը, ինչպես նաև PKK 5 զինյալներ տեղափոխվեցին նորակառույց մասնաշենք: Մինչև վերջերս այդ կալանավայրը հսկում էին հատուկ նշանակության մարտիկները, իսկ այժմ դա անում են կալանավայրերի սովորական հսկիչները: Թերեւս, իշխանությունների զիջողականության պատճառն այն է, որ Օջալանը համաձայնել է Թուրքիա վերադառնալու կոչով դիմել PKK անդամների խմբին («խաղաղության խմբին»)՝ որպես PKK-ի կողմից զինյալ պայքարին վերջ դնելու պատրաստականության ժեստ: Նույնիսկ նշվում է, որ Օջալանն արդեն նախապատրաստել է ընդհանուր դեմոկրատացման շրջանակներում «Քրդական հարցի» փուլային լուծման «ճանապարհային քարտեզը» եւ այն փաստաբանի միջոցով հանձնել թուրքական իշխանություններին:

Միաժամանակ, հոկտեմբերի երկրորդ կեսին Օջալանի կոչով PKK 34 անդամներից բաղկացած «խաղաղության խումբը» վերադարձավ Թուրքիա: Նրանք ձերբակալվեցին, սակայն որոշ ժամանակ անց դատարանը համաներմամբ («զղջման օրենք»-ի հիմքով) ազատեց նրանցից 29-ին, իսկ հետո՝ նաև մնացած 5-ին: Դատարանը դա հիմնավորեց նրանով, որ «PKK-ում գտնված ժամանակ նրանք ոչ մի հանցագործություն չէին կատարել»:

Տասնյակ հազարավոր համակիրներ, քրդական Դեմոկրատական հասարակարգ կուսակցության (ԴՀԿ) գլխավորությամբ, մեծ շուքով

ընդունեցին զինյալների վերադարձը, որով էլ հարուցեցին թուրքական հասարակության ու հատկապես ընդդիմության դժգոհությունը: Սակայն ամենամեծ դժգոհությունն արտահայտեցին PKK-ականների կողմից սպանված թուրք զինծառայողների մայրերն ու հակամարտության ժամանակ վիրավորված վետերանները: Այդ կապակցությամբ ԴՀԿ առաջնորդ Ահմեթ Թուրքը հայտարարեց, որ իրենք հետագայում առավել չափավոր կլինեն եւ վերադարձողներին կդիմավորեն միայն նրանց ընտանիքների անդամները:

Սակայն չպետք է կարծել, թե զինյալների Թուրքիա վերադարձով PKK-ն թուլանում է: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ Թուրքիա վերադարձած 34 PKK-ականների փոխարեն այս կառույցին են միացել 55 նոր զինյալներ: Իսկ Քրդական ազգային կոնգրեսի անդամ Դուրան Քալքանը քրդական երիտասարդությանը կոչ է արել միանալ PKK-ին, որպեսզի դրանով Թուրքիայի կառավարությանը պարտադրեն խաղաղություն, քանզի միայն իրենց ուժեղ լինելու հանգամանքը դրա հնարավորությունը կընձեռի¹:

Թուրքական խորհրդարանում «քրդական նախաձեռնությունների» կապակցությամբ նախնական քննարկումներն սկսվեցին 2009 թվականի նոյեմբերի 10-ին: Հասկանալի պատճառով դրանք ստացան «դեմոկրատական նախաձեռնություններ» անվանումը (ըստ իշխող Արդարություն եւ Չարգացում կուսակցության (ԱԶԿ)՝ «ազգային միասնության ծրագիր»):

«Նախաձեռնությունները» բաղկացած են 10 կետից.

1. Թուրքիայի միացյալ պետական կարգի պահպանում: Բոլոր քաղաքական կուսակցությունները, ներառյալ ԴՀԿ-ն, կողմ են երկրի միացյալ կարգի պահպանմամբ քրդական հարցի լուծմանը:

2. Քրդերեն լեզվով քաղաքական ակցիաներ անցկացնելու թույլտվություն: Առաջարկվում է փոփոխություններ կատարել «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքի 81-րդ հոդվածում, ըստ որի՝ քաղաքական ակցիաների անցկացումը թույլատրվում է բացառապես թուրքերեն լեզվով: Այսուհետ քրդերենին այդպիսի հնարավորություն կընձեռվի:

3. Քրդերեն լեզվի ուսումնասիրում: Առայժմ ձեռք չի բերված հասարակական կրթության մեջ քրդերենի կիրառման մասին համաձայնությունը: Առաջարկը ներառում է դպրոցներում քրդերեն լեզվի հավելումը՝ որպես ոչ պարտադիր առարկա եւ հասարակական ուսումնական կենտրոններում այդ լեզվով դասընթացների հիմնումը: Նախատեսվում է նաեւ վերացնել քրդերենով մասնավոր հեռուստակայանների հաղորդումների վերաբերյալ սահմանափակումները:

4. Քրդերենը կթույլատրվի բանտերում: Կվերացվի բանտերում քրդերեն լեզվով հաղորդակցվելու ներկայիս արգելքը:

5. Քրդերեն լեզվով տեղանունների վերականգնումը: Երկրի արեւելքում ու հարավ-արեւելքում կվերականգնվեն հազարավոր քաղաքների ու գյուղերի անունները, որոնք նախկինում փոխարինվել են թուրքական տեղանուններով:

6. Քրդերեն լեզուն ինստիտուտներում: Կառավարությունը երաշխավորում է, որ Մարդինի ու Դիարբեքիրի ինստիտուտներում կբացվեն քրդերեն լեզվի, գրականության ու պատմության ուսումնասիրման ամբիոններ (Սահմանադրության 42-րդ հոդվածով արգելվում է Թուրքիայի ուսումնական հաստատություններում թուրքերենից բացի, այլ լեզուներով դասավանդումը): Նախատեսվում է նաեւ քրդերենով Դուրանի հրատարակումը:

7. Երեխաներն ահաբեկիչներ չեն: Թուրքիայի արեւելքում ու հարավ-արեւելքում տեղի ունեցած ցույցերի ժամանակ թուրքական ոստիկանության կողմից ձերբակալված քուրդ երեխաները հակաահաբեկչական օրենքի հիման վրա դատապարտվել են գերագույն դատարանի կողմից: Դրա հետ կապված՝ կառավարությունը պլանավորում է փոփոխություններ մտցնել Հակաահաբեկչական օրենքի 9-րդ հոդվածում, որով կկանխվի երեխաների նկատմամբ այնպիսի պատժամիջոցների կիրառումը, որոնք կիրառվում են չափահասների նկատմամբ: Կառավարությունը նաեւ պլանավորում է սահմանափակել երեխաների մասնակցությունը ցույցերին: Կթույլատրվի նաեւ քուրդ երեխաներին քրդական անուններ շնորհելը:

8. «Ակտիվ զոջման օրենքն» ուժի մեջ է մտնում: Թուրքիայի Քրեական օրենսգրքի 220-րդ հոդվածով մասնակի համաձայնեցման օրենքը, որը կոչվում է «ակտիվ զոջման օրենք», մտնում է ուժի մեջ: Այս օրենքն էֆեկտիվ ազդեցություն կունենա այն զինյալների վերադարձի վրա, որոնք ժամանակին միացել են PKK-ին:

9. Դաժան հանցագործությունները չեն ներվի: Նախատեսվում է փոփոխություններ մտցնել Թուրքիայի Քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածում, ինչի շնորհիվ այն ավելի լոյալ կդառնա: Սակայն կառավարությունը երաշխավորում է, որ դաժան հանցագործությունների նկատմամբ կկիրառվեն համարժեք միջոցառումներ:

10. Ազատություն քուրդ մտավորականությանը: Պլանավորվում է, որ կվերականգնվի ահաբեկչական ակցիաներին չմասնակցած քրդերի քաղաքացիությունը:

Թուրքիայի ներքին գործերի նախարար Բեշիր Աթալայը նշել է. «Յեռնակարում անհրաժեշտ է, որ Թուրքիան ընդունի նոր «դեմոկրատական եւ քաղաքացիական» սահմանադրություն, որը կփոխարինի 1982 թվականին ռազմական խուճուկի օրոք ընդունված սահմանադրությանը»: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Սահմանադրության 66-րդ հոդվածին, որում նշված է. «Ամեն ոք, ով քաղաքացիական պարտականությամբ կապված է թուրքական պետության հետ, թուրք է»: Այս հոդվածով փաստացիորեն ժխտվում է Թուրքիայում այլ ազգությունների առկայությունը: Նախատեսվում են այս արտահայտության այլընտրանքային տարբերակներ:

Սույն նախածեռնությունների հետ կապված՝ ընդդիմադիր կուսակցությունները խորհրդարանում բուռն գործունեություն ծավալեցին: Ընդդիմությունը քննարկման օրվա ընտրությունը (նոյեմբերի 10) համարեց անհարգալից վերաբերմունք Քեմալ Աթաթուրքի հիշատակին, քանի որ այդ օրը նրա մահվան 71-րդ տարեդարձի օրն էր: Ժողովրդահանրապետական կուսակցության (ԺՀԿ) ներկայացուցիչները խորհրդարանում ցուցապաստառներ հանեցին, որոնց վրա գրված էր. «Մեր Աթաթուրք, քո թողածին տեր ենք կանգնելու», «Աթաթուրքի հետքերով ենք գնում», «ՔՀԿ-ն, հայերն ու ահաբեկիչները թուրքերի թշնամիներն են», «Քուրդ ահաբեկիչներին ներում չկա» եւ այլն: Անգամ ծեծկռտուք տեղի ունեցավ:

Ազդեհիվ վարքով աչքի ընկավ Իզմիրից ընտրված կին խորհրդարանական Ջանան Արըթմանը, ով ժամանակին մեղադրել է Գյուլին, թե նրա մայրական կողմը հայկական արմատներ ունի: Ջանանը լրագրողների ներկայությամբ նշել է. «Տեսա՞ք, թե Գյուլի կինը վերջին անգամ ինչ հագուստ էր կրում: Միայն միանձնուհիներն են կրում այդպիսի հագուստ: Եթե ասեմ, որ Գյուլի կինը նման է պինգվինի, ապա պինգվիններին վիրավորած կլինեմ»:

ԴՀԿ առաջնորդ Ահմեթ Թուրքն իր հերթին առաջնային համարեց քրդական բնակչության իրավունքների պահպանումը եւ հավելեց, որ թուրքական իշխանությունը պարտավոր է լուծել նաեւ մյուս բոլոր ազգային փոքրամասնությունների խնդիրները²: Կարծիքներ կան, որ Ահմեթ Թուրքի պապը եղել է հայ, որ 1925 թվականին փոխել է անունն ու ազգանունը՝ հալածանքներից խուսափելու համար:

ԺՀԿ փոխնախագահ Օնուր Օյմենը, որ հայտնի է իր հակաքրդական ու հակահայկական պահվածքով, անսպասելիորեն հայտարարեց, որ ներկայում քրդական հարցը պետք է լուծել այնպես, ինչպես 1937–1938 թվականներին Դերսիմի (հետագայում վերանվանված Թունջելի) կոտորածների ժամանակ: Օյմենն իշխանություններին քննադատել է. «Մի՞թե

Աթաթուրքն այդպես է վարվել 1925 թվականի քրդական ապստամբության ղեկավար Շեյխ Սայիդի հետ: Իսկ դուք ահաբեկչի հետ սեղան եք նստում, բանակցություններ վարում: Ձեռքը ձեռքն առածին ու լեռները բարձրացածին բաց եք թողնում, իսկ ձեռքը գրիչ վերցնողին բանտ նետելը նորմալ եք համարում: Սա՞ է ժողովրդավարացման ձեր հասկացողությունը»: Օյմենի այս հայտարարությունը ցնցել է անգամ ԺՀԿ նախագահ Դենիզ Բայքալին, որը քննադատել է Օյմենին՝ զգացմունքային թեմաներին անդրադարձ կատարելու համար:

Դրանից հետո Թունջելիի ղեկավարությունն Օյմենին կոչ արեց ներողություն խնդրել թունջելիցիներից: Թունջելիի բնակիչներն էլ Օյմենին հայտարարեցին ֆաշիստ՝ քաղաքի պատերին փակցնելով նրա նկարները՝ Հիտլերի նմանությամբ: Նոյեմբերի 17-ին թուրքական «Ձաման» թերթին տված հարցազրույցում Օյմենը նշել է. «Ես, իհարկե, չեմ ընդունում, երբ ինձ Հիտլերի հետ են նույնացնում: Ե՞ս եմ ճնշել Դերսիմի ապստամբությունը: Մի՞թե ֆաշիստ էր նաև Աթաթուրքը»: Փաստորեն, սրանով Թուրքիայում նախադրյալներ են ստեղծվում Աթաթուրքի թաբուի վերացման համար (երկար տարիներ Աթաթուրքի արժանիքները կասկածի տակ առնողներին սպառնացել է 301-րդ հոդվածով բանտարկվելու կամ աշխատանքից հեռացվելու ու պայմանական բանտարկության վտանգը):

Անդրադառնալով Օյմենի խոսքերին՝ «Հյուրիյեթի» գլխավոր խմբագիր Էրթուղրուլ Օզքոքը նշում է. «Օյմենին ուղղված իր քննադատական խոսքում Էրդողանն օգտագործել է «Դերսիմի կոտորած» բառերը: Բացի այդ, Դարֆուրի (Սուդան) ցեղասպանության կապակցությամբ նա նշել է, որ մահմեդականն ի վիճակի չէ ցեղասպանություն իրականացնելու: Իսկ այդ դեպքում ո՞վ է 1937-1938 թվականներին Դերսիմում կոտորել քուրդալավիներին, ո՞վ է ռունբեր նետել նրանց քարանձավների վրա: Միգուցե քրիստոնյա թո՞ւրքը: Ցայժմ անհայտ է մնում «Դերսիմյան իրադարձության» ժամանակ զոհվածների թվաքանակը, որը տատանվում է 7000-90.000-ի միջև: Եվ եթե այդչափ մարդկանց սպանությունը պաշտոնապես (Էրդողանի մակարդակով) անվանվում է կոտորած, ապա ինչ ասել «Հայկական հարցի» մասին: Հայկական թեզերի համաձայն, 1915 թվականին զոհվածների թվաքանակը կազմել է 1.5 միլիոն մարդ: Լավ, ասենք թե 600.000 է: Որքա՞ն է այդ թվաքանակը գերազանցում «դերսիմյանը»: Եթե Դերսիմում զոհվածների թվաքանակը կազմել է 7000, ապա՝ 200 անգամ, իսկ եթե 90.000, ապա 17 անգամ: Եթե Դերսիմում տեղի ունեցածը կոտորած է, ապա ինչպես բնութագրել «Հայկական հարցը». «մեծ կոտորած», «խոշոր կոտորած», «սարսափելի կոտորած», «մեծամասշտաբ կոտորած»: Եվ եթե վաղն այս հարցի պատասխանը ծառանա Թուրքիայի

ղեկավարության առջեւ, ապա ո՞րը կլինի պաշտոնական պատասխանը»:

Օյնենի խոսքերում միակ դրական հանգամանքը կարելի է համարել այն, որ մինչ այդ շատ թուրքեր Դերսիմի կոտորածների մասին կամ ոչինչ չգիտեին, կամ էլ գիտեին, որ դա քրդական 28 ապստամբություններից մեկի ճնշումն էր:

Քննարկումները շարունակվեցին նոյեմբերի 12-ին ու 13-ին: Նոյեմբերի 13-ին Էրդողանը թուրքական խորհրդարանում իր ելույթի սկզբում հիշեցրեց, որ Քեմալ Աթաթուրքը քեմ չի դրսեւորել այն երկրների նկատմամբ, որոնց դեմ պատերազմել է: Սակայն ընդդիմադիրները, աղմուկ բարձրացնելով, ընդհատեցին Էրդողանի ելույթը, ապա նաեւ ցուցադրաբար լքեցին դահլիճը: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Էրդողանը հարցրեց, թե Դենիզ Բայքալի կուսակցությունը վերջին 3.5 տարում ինչ է արել թուրքիայի համար: Բացի այդ, Էրդողանն առանց անուններ նշելու, ասաց, որ մարդիկ սկսել են վերակենդանացնել Աթաթուրքին՝ իշխանության դեմ օգտագործելու համար: Այս խոսքերն իրեն վերագրելով՝ ԺՅԿ-ն լքեց դահլիճը (Քեմալ Աթաթուրքը ԺՅԿ հիմնադիրն ու հավերժ նախագահն է):

Դահլիճը լքելուց անմիջապես հետո ԺՅԿ ղեկավար Դենիզ Բայքալն ասել է, որ ինքը հարգանքով է վերաբերվում էթնիկ ինքնությանը, սակայն դա չի ենթադրում առանձին ազգի ձեւավորում: Նա հավելել է. *«Մեր պետությունը կոչվում է Թուրքիա: Մեր ազգը կրում է թուրք անունը: Թուրքիայում բնակվող քրդերն էլ թուրք ազգին պատկանող քրդեր են: Ասում են, թե թուրքերը հայերին մորթեցին: Մի՞թե դա նշանակում է, որ քրդերը չեն մորթել եւ մորթել են միայն էթնիկ թուրքերը: Սա սխալ է, բայց թիրախի դերում հայտնվել ենք միայն մենք»:*

Նոյեմբերի 14-ին Բայքալն իշխանություններին մեղադրեց քուրդ անջատողականների հետ համագործակցության մեջ՝ այս նախաձեռնությունները որակելով որպես իշխանական խորամանկություն: ԺՅԿ-ն վստահ է, որ ԱԶԿ-ն գաղտնի բանակցություններ է վարում Օջալանի հետ, որպեսզի վերջինս հանդես գա PKK-ի հետ միջնորդի դերում: Չնայած մեկուսացմանը՝ մատնանշվում է, որ Օջալանը դեռ վերահսկում է PKK-ի գործունեությունը: Բայքալը ծակատագրական սխալ է անվանել զինված կազմակերպության հետ բանակցություններ սկսելը՝ նշելով, որ եվրոպական եւ ոչ մի երկիր երբեք ահաբեկիչների հետ սեղան չի նստել:

Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ) նախագահ Դելեթ Բահչելին նոյեմբերի 13-ին կայացած նստաշրջանն անվանեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 89-ամյա պատմության ամենատխուր օրերից մեկը: Նա հիշեցրել է, որ երբ 2002 թվականին, ԱԶԿ-ն իշխանության եկավ, խոս-

տացավ վերջ տալ ահաբեկչությանը, իսկ այժմ՝ 7 տարի անց, ցանկանում է վերջ տալ էթնիկ պետությանը: Բահչելին մտադիր է դատի տալ Էրդողանին: Նոյեմբերի 12-ին, երբ Բահչելին ելույթ էր ունենում թուրքական խորհրդարանում, Էրդողանը ցածրաձայն ծանր հայիոյանք է ուղղել Բահչելիի հասցեին: Դա պարզվել է այն բանից հետո, երբ թուրք ազգայնականները դիմել են շուրթերով կարդացող մասնագետների օգնությանը, ինչի արդյունքում էլ պարզվել է վերոնշյալը:

Էրդողանն իր հերթին մեղադրել է այս երկու կուսակցություններին՝ Արեւելյան Անատոլիայի բնակիչներին անտեսելու մեջ. «Այդ տարածաշրջանի խնդիրները մեր խնդիրներն են, ինչի համար էլ անհմար է անտեսել դրանք», – ասել է նա:

Թուրքական հասարակական կարծիքը նույնպես անհանգստացած է: Ցայժմ շատ թուրքեր, պետական քարոզչության շնորհիվ, քրդական հարցը դիտարկել են որպես բացառապես ահաբեկչության խնդիր: Դրա համար էլ թուրքական հասարակությունը դեռ պատրաստ չէ այդ նախաձեռնություններին: Այս պատճառով էլ հասարակության շրջանում որոշակիորեն նվազեց իշխանությունների վարկանիշը: Նոյեմբերի կեսին «MetroPOLL» կենտրոնի անցկացրած սոցիալոգիաներից հայտնի դարձավ, որ ԱԶԿ կողմնակիցների թվաքանակը կազմել է 32 տոկոս (օգոստոսին՝ 39 տոկոս): Հասարակության շրջանում ապատեղեկատվություն տարածելուց խուսափելու համար ԱԶԿ-ն ստեղծել է 40 անձից բաղկացած հատուկ խումբ, որի մեջ են մտել մի շարք նախարարներ ու խորհրդարանականներ: Վերջիններս պետք է պարբերաբար շրջեն ողջ երկրում (81 վիլայեթներում) ու բնակչությանը բացատրեն, թե որն է այս նախաձեռնությունների էությունը: Էրդողանը հայտարարել է, որ այդ նպատակով պատրաստ է անձամբ այցելել երկրի 50 վիլայեթ: Նոյեմբերի 14-ին, ելույթ ունենալով Մալաթիայում, Էրդողանը հայտարարեց, որ, հանուն այս գաղափարի, իրենք անգամ պատրաստ են զրկվել իրենց պաշտոններից:

Նոյեմբերի 13-ին ուժի մեջ մտան «Հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքի» շրջադարձային փոփոխությունները, համաձայն որոնց՝ վերացվեցին ազգային փոքրամասնությունների լեզուներով ու բարբառներով հեռարձակումների վերաբերյալ ժամանակային եւ այլ կարգի սահմանափակումները: Անշուշտ, շուրջօրյա եթերը կշարունակի վերահսկվել, թերեւս, անհնար կլինի հաղորդումներում քրդական հարցի համակողմանի արծարծումը, Թուրքիայի դատական համակարգի կամ ուժային կառույցների քննադատումը: Սակայն, միեւնույն ժամանակ, այժմ Թուրքիայում կարելի է այլ լեզուներով (ասենք՝ հայերենով) բացել մասնավոր հեռուստաալիքներ, առանց «Թուրքիայի հեռուստատեսու-

թյան ու ռադիոյի կազմակերպության» (RTUK) հատուկ թույլտվության:

Ձգտելով երկրում իրականացնել «դեմոկրատական նախաձեռնություններ»՝ ԱԶԿ-ն այդ նպատակով մտադիր է ստեղծել մարդու իրավունքների պաշտպանության անկախ մարմին, խտրականության դեմ պայքարի հանձնաժողով, ուժային կառույցների կողմից մարդու իրավունքների խախտման հարցերով անկախ մարմին, ինչպես նաև վավերացնել տանջանքների դեմ ՄԱԿ կոնվենցիան:

ԱԶԿ առաջադրած «դեմոկրատական նախաձեռնությունները» դրականորեն կանդրադառնան ոչ միայն թուրքիայի խոշորագույն ազգային փոքրամասնության՝ քրդերի իրավունքների բարելավման վրա, այլև համապատասխան հիմք կստեղծեն մյուս ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հայերի իրավունքների բարելավման համար:

Բարեփոխումների իրագործմամբ ԱԶԿ-ն հետապնդում է մի քանի նպատակ.

- ❖ Ցույց տալ ԵՄ-ին, որ թուրքիայում կոնկրետ ու հստակ քայլեր են ձեռնարկվում նրա կողմից մատնացույց արված խնդիրների ուղղությամբ, որ չեն անտեսվում ԵՄ խորհուրդներն ու հորդորները: Թուրքիան այս բարեփոխումներով ցանկանում է մեղմել ԵՄ առաջատար որոշ երկրների, մասնավորապես՝ Ֆրանսիայի ու Գերմանիայի կոշտ դիրքորոշումն իր անդամակցության նկատմամբ: Թուրքիան ցանկանում է կանխել ԵՄ-ի կողմից նոր բեռլինյան պատի ստեղծումը (ինչպես արտահայտվել էր նախագահ Գյուլը): ԵՄ-ին թուրքիայի անդամակցության արդյունքում թուրքիայում զգալիորեն կնվազի զինվորականների դերը, ինչը ԱԶԿ ջանքերով արդեն իսկ որոշակի անկում է ապրել: ԵՄ-ին անդամակցության պարագայում կբացառվի ռազմական հեղաշրջման տարբերակը, ինչը թուրքիայում մշտապես արդիական է եղել:

- ❖ Հանդարտեցնել օրեցօր ակտիվացող քրդական շարժումը, վերջ դնել ռազմական ու ահաբեկչական գործողություններին, դրանով իսկ զգալի գումարներ տնտեսել: Մասնավորապես, ներկայում թուրքական կառավարությունը մեծ գումարներ է ծախսում գյուղական անվտանգության համակարգերի վրա:

- ❖ ԱԶԿ-ն արդեն իսկ սկսել է պատրաստվել 2011 թվականի խորհրդարանական ընտրություններին, քանի որ «քրդական նախաձեռնությունները» նրան հնարավորություն են ընձեռում մեծ թվով քվեներ հավաքել երկրի արևելյան ու հարավարևելյան քրդաբնակ շրջաններում:

- ❖ Ըստ Էրդողանի՝ «Միամիտ կլինի կարծել, թե դեմոկրատական նախաձեռնությունները ոչ մի ընդհանուր կապ չունեն տնտեսության հետ»:

Քրդաբնակ տարածաշրջանում հանդարտության ու կայունության ապահովումը թուրքիային հնարավորություն կընձեռի զերծ մնալ այն տնտեսական վնասներից, որոնք նա կրում է տարածաշրջանի անհանգիստ լինելու պարագայում. օրինակ, 2008 թվականին, երբ քրդերը պայթեցրին «Թավրիզ–Անկարա» գազամուղը: Քրդերի հանդարտության պարագայում կարելի կլինի Իրանից նոր խողովակաշար (Ասալույե–Բազարգան գազատար) կառուցել դեպի Թուրքիա, ապա նաև՝ դեպի Եվրոպա (ի դեպ, Թուրքիան մտադիր է մինչ 2023 թվականը տեղ զբաղեցնել աշխարհի խոշորագույն տնտեսություն ունեցող երկրների լավագույն տասնյակում):

¹ Չնայած «քրդական նախաձեռնություններին», նոյեմբերի վերջից սկսած՝ ողջ Թուրքիայում տեղի ունեցան քրդերի զանգվածային ցույցեր՝ Օջալանի բանտային պայմանները բարելավելու պահանջով: Այս գործողությունների հետևում, անշուշտ, կանգնած է PKK-ն, որն իր հիմնադրման 35-ամյակը որոշեց «նշել» Մերսինի շրջանի թուրքական ոստիկանատններից մեկի վրա հարձակմամբ: Թուրքիայի տարբեր վայրերում բախումներ տեղի ունեցան քուրդ ցուցարարների ու ոստիկանական ուժերի միջև, ձերբակալվեց 153 մարդ:

² Դեկտեմբերի սկզբին հայտնի դարձավ, որ Թուրքիայի Սահմանադրական դատարանը (ՍԴ) քննարկելու է ԴՅԿ գործունեության կասեցման հարցը: ԴՅԿ-ն, որը 550 հոգանոց խորհրդարանում ունի 21 մանդատ, մեղադրվում է PKK-ի հետ կապեր ունենալու մեջ: Մեղադրող կողմը պահանջում է Սահմանադրության 69/9 եւ «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքի 95-րդ հոդվածների համաձայն՝ ԴՅԿ 220 անդամներին, այդ թվում նաև կուսակցական վերնախավին 5 տարով արգելել քաղաքական գործունեությամբ զբաղվել: Հատկանշական է, որ թուրքական դատարանի հայտարարությունը հնչում է այն ժամանակ, երբ երկրի կառավարությունը պլանավորել է բարեփոխումներ իրականացնել: Ի դեպ, այսպիսի հայց բացվել էր դեռևս երկու տարի առաջ՝ 2007թ. նոյեմբերին, սակայն այն ժամանակ դա մերժվել էր, եւ կուսակցությունն իրավունք էր ստացել մասնակցելու 2008թ. մարտի տեղական ինքնակառավարման ընտրություններին:

Հիշեցնենք, որ Թուրքիայի ՍԴ-ն բաղկացած է 11 հիմնական ու 4 պահեստային անդամներից, եւ որոշման ընդունման համար անհրաժեշտ է 7 քվե:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Արաքս Փաշայան

2002թ. Թուրքիայում իշխանության եկած իսլամամետ Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) կառավարությունը վերանայեց երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունները: Արդյունքում՝ Թուրքիայի միջինարեւելյան, մասնավորապես՝ արաբական ուղղությունը ձեռք բերեց գերակա նշանակություն: Թուրքիան այն երկիրն է, որ շուրջ չորս հարյուր տարի, Օսմանյան կայսրության ժամանակ, Միջին Արեւելքի ամենաազդեցիկ դերակատարներից էր:

ԱԶԿ իշխանության գալուց ի վեր Թուրքիան նոր թափով սկսեց քայլեր ձեռնարկել՝ նվազեցնելու կամ չեզոքացնելու իր անվտանգությանը սպառնացող այն ռիսկերը, որ ձեւավորվել էին միջինարեւելյան տարածաշրջանում: Բացի այդ, Թուրքիան ձգտում է ակտիվ դերակատարություն ունենալ ոչ միայն մերձավորարեւելյան հակամարտությունների եւ տարածաշրջանային հիմնախնդիրների կարգավորման հարցերում, այլեւ՝ արաբական իսլամական առանձին ուժային կենտրոնների եւ Արեւմուտքի միջեւ բարդ ու փխրուն հարաբերություններում: Այլեւս ակնհայտ է, որ Թուրքիան ձգտում է դառնալ տարածաշրջանի հանգուցային պետությունը, որի համար նա, ըստ էության, ունի բավարար ռեսուրսներ:

Ներկայումս Թուրքիան սերտ կապեր ունի Սիրիայի, Հորդանանի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Կատարի, Իրաքի, Լիբանանի, Լիբիայի եւ արաբական այլ երկրների, այդ թվում՝ Պաղեստինյան ինքնավարության երկու հիմնական ուժերի՝ «Ֆաթիխ» եւ «Համասի» հետ: Արաբական երկրների եւ Թուրքիայի հարաբերություններում օրակարգային են հատկապես տարածաշրջանային անվտանգության, առեւտրատնտեսական եւ էներգետիկ համագործակցության խնդիրները: Արաբական մի շարք երկրների հետ Թուրքիան պայմանագրեր ունի մուտքի արտոնագրային ընթացակարգի վերացման եւ ազատ առեւտրի կազմակերպման մասին: Մեծ չափերի են հասնում արաբական երկրների հետ Թուրքիայի ապրանքաշրջանառության ծավալները: Արաբական աշխարհում Թուրքիայի հարաճուն ներգրավվածության ապացույցը Անկարայում ներկայացուցչություն ունենալու Արաբական պետությունների լիգայի ցանկությունն է:

Թուրքիան հստակորեն գիտակցում է, որ արաբական աշխարհում լեգիտիմանալու համար նախեսևառաջ անհրաժեշտ է որոշակիորեն վերանայել հարաբերություններն իր ամենասերտ դաշնակիցներից մեկի՝ Իսրայելի հետ: Թուրքիան վերջին շրջանում սկսել է ակտիվորեն քննադատել այդ երկրի գործողությունները Ղազալում՝ նկատի ունենալով 2006թ. պառլամենտական ընտրություններում «Համասի» հաղթանակից հետո Ղազալի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառումը, 2007-ի հունիսից՝ ամբողջական շրջափակումը, իսկ 2008-ի դեկտեմբերից՝ լայնածավալ օդային, ապա՝ ցամաքային ռազմական գործողությունների իրականացումը: 2008-ի պատերազմի ընթացքում Անկարան քննադատեց ԱՄՆ-ին՝ Իսրայելին աջակցելու, եւ միջազգային քառակկին՝ բանակցային գործընթացից «Համասին» դուրս մղելու համար, որը, Թուրքիայի կարծիքով, պետք է ճանաչի Իսրայելի գոյությունը եւ այդպիսով մասնակից դառնա Միջին Արեւելքում խաղաղության հաստատմանը: Հատկանշական է, որ պատերազմի ընթացքում Անկարան փորձեց կապեր հաստատել հակամարտող կողմերի հետ: Թուրքիան աջակցություն հայտնեց Իսրայելի եւ «Համասի» միջեւ ռազմական գործողությունների դադարեցման եզրիպտոսի ծրագրին՝ որոշակիորեն նպաստելով 2009թ. հունվարի 18-ին զինադադարի հաստատմանը: Նախագահ Գյուլը հունվարի 19-ին մասնակցեց Շարմ ալ-Շեյխում Ղազալի ճգնաժամի հաղթահարմանն ուղղված գազաթափողովին: Անկարան պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում իր զորքերն ուղարկել տարածաշրջան՝ միջազգային խաղաղապահ ուժերի կազմում:

Թուրք-իսրայելական հարաբերություններում առկա լարվածությունը գազաթնակետին հասավ 2009թ. հունվարի վերջին Դավոսում Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ Իսրայելի նախագահ Շ.Պերեսի եւ Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանի միջեւ հայտնի բանավեճի ժամանակ: Դրանից հետո Իսրայելը հայտարարեց, որ Թուրքիան չի կարող անկողմնակալ միջնորդ լինել Իսրայելի եւ Սիրիայի միջեւ բանակցություններում, որոնք երկար ընդմիջումից հետո վերսկսվել էին 2008-ին՝ Թուրքիայի միջնորդությամբ: Սակայն կողմերին ի վերջո հաջողվեց հաղթահարել լարվածությունը, իսկ սույն թվականի նոյեմբերին Իսրայելը պատրաստակամություն հայտնեց վերսկսել Թուրքիայի միջնորդությամբ բանակցությունները:

Թուրքիան, ըստ ամենայնի, ցանկություն ունի ստանձնել «Ֆաթիհ» եւ «Համասի» հակասությունները հարթելու առաքելությունը, ինչը դեռեւս չի հաջողվել որեւէ արաբական պետության:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա վերջինիս հետ Թուրքիան

բավական լարված հարաբերություններ ունեցող 1980–1990-ականներին, ինչը պայմանավորված էր քրդական շարժմանը Սիրիայի աջակցության հանգամանքով: Դրանով Դամասկոսը փորձում էր հակազդել Եփրատի եւ Տիգրիսի ջրային հոսքերն ամբողջովին վերահսկող Անկարային, որը Սիրիայի նկատմամբ ջրային սահմանափակումներ էր կիրառում: 1998-ին երկու երկրների միջեւ նույնիսկ առաջացավ պատերազմի վտանգ, ինչը սակայն հնարավոր եղավ կանխել: Արդյունքում՝ Սիրիան դադարեց աջակցել քրդական շարժմանը, իսկ Թուրքիան Սիրիային հատկացրեց ջրի գոհացուցիչ չափաբաժին: Բացի այդ, Սիրիան դադարեց շեշտադրել Թուրքիայի հետ ունեցած տարածքային վեճը, որը կապված էր 1939թ. Ֆրանսիայի կողմից Սիրիայի կազմում գտնվող Ալեքսանդրեթի սանջակը Թուրքիային հանձնելու փաստի հետ: Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ միջպետական հարաբերություններն աննախադեպ զարգացան արդեն ԱԶԿ իշխանության գալուց հետո, Բաշար ալ-Ասադի կառավարման շրջանում՝ ներառելով համագործակցության գրեթե բոլոր ոլորտները: Վերջին շրջանում երկու երկրների համագործակցությունը ռազմավարական նշանակություն է ձեռք բերել, որի ապացույցը 2009թ. սեպտեմբերին Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ ռազմավարական համագործակցության խորհուրդ ստեղծելու մասին պայմանագրի ստորագրումն է:

Սիրիայի համար Թուրքիայի հետ համագործակցությունը շահեկան է, որի միջոցով Դամասկոսը ձգտում է հաղթահարել միջազգային մեկուսացումը: Իր հերթին, Թուրքիայի համար Սիրիայի հետ կապերը նույնպես կարեւոր են, քանի որ վերջինս արաբ-իսրայելական հակամարտության, ընդհանրապես տարածաշրջանային, այդ թվում՝ ներլիբանանյան զարգացումների ամենաառանցքային դերակատարներից է, որը Իրանի¹ հետ միասին ծանրակշիռ ազդեցություն ունի «Յիզբալլահի» եւ «Համասի» նկատմամբ:

Ռազմավարական նշանակություն են ձեռք բերել Թուրքիայի եւ Իրաքի հարաբերությունները, որոնք համագործակցում են գրեթե բոլոր ոլորտներում: 2009թ. հոկտեմբերին Թուրքիան եւ Իրաքը ռազմավարական համագործակցության խորհուրդ ստեղծելու մասին պայմանագիր ստորագրեցին: Իրաքի համար Թուրքիայի հետ հարաբերություններում առանցքային է ջրի խնդիրը, ինչպես նաեւ համագործակցությունն անվտանգության ոլորտում, իսկ Իրաքի համար Թուրքիայի հետ հարաբերություններում՝ էներգետիկ համագործակցությունը եւ քրդական հարցը, ինչը երկու երկրների միջեւ լարվածություն էր առաջացրել 2003-ից ի վեր: Անկարայի եւ Բաղդադի միջեւ հարաբերությունների կարգավորման հեռանկարներ բացվեցին անցյալ տարի, երբ Իրաք այցելեց Թուրքիայի վարչապետը:

2009թ. հունվարին Թուրքիան, Իրաքը եւ Միացյալ Նահանգները պայմանավորվածություն ձեռք բերեցին Քրդական աշխատավորական կուսակցության դեմ համատեղ պայքարի վերաբերյալ: Ներկայումս դրական շրջադարձ է նկատվում ոչ միայն Բաղդադի եւ Անկարայի, այլեւ Իրաքի քրդական վարչակարգի եւ Թուրքիայի հարաբերություններում, որը ուրվագծվեց Թուրքիայի արտգործնախարար Ա.Դավութօղլուի՝ 2009թ. հոկտեմբերին Էրբիլ կատարած այցելությամբ:

Հատկանշական է, որ վերջին շրջանում Թուրքիան փորձում է հարթել հակասությունները Իրաքի եւ Սիրիայի միջեւ, ինչը կապված էր այս տարվա օգոստոսի 19-ին Բաղդադում տեղի ունեցած ահաբեկչության հետ, ինչի համար Իրաքի իշխանությունները մեղադրում էին Դամասկոսին: Արդյունքում՝ երկու երկրները խզել էին դիվանագիտական հարաբերությունները:

Միջինարեւելյան զարգացումների համատեքստում բավական հաջողված էր Թուրքիայի ակտիվ դերակատարությունը լիբանանյան ճգնաժամի ընթացքում՝ 2006-ին, երբ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ ձեռնարկեց «Հիզբալլահի» դեմ եւ ներխուժեց Լիբանանի հարավային շրջաններ: Թուրքիան դատապարտեց Իսրայելին՝ մեղադրելով նրան ոչ թե ռազմական ագրեսիա կազմակերպելու, այլ «Հիզբալլահի» դեմ ոչ համաչափ ուժ կիրառելու մեջ: ԱԶԿ կառավարությունը, չանսալով երկրի հասարակական-քաղաքական տարբեր շրջանակների, այդ թվում՝ երկրի նախագահի քննադատությանը, ներգրավվեց ՄԱԿ հովանու ներքո Լիբանանի հարավում տեղակայվելիք միջազգային խաղաղապահ զինված ուժերի կազմում: Թուրքիան այդպիսով ի ցույց դրեց, որ տարածաշրջանի արաբական երկրների հետ համընդհանուր շահեր ունի: Հատկանշական է, որ Թուրքիան գաղտնի աջակցեց հակամարտող երկու կողմերին. «Հիզբալլահին» տրամադրեց իր տարածքը՝ զենք փոխադրելու համար, իսկ Իսրայելին փոխանցեց «Հիզբալլահի» մասին թուրքական հետախուզության տվյալները:

Վերջին շրջանում զարգացման նոր փուլ են թելակոխել նաեւ թուրք-հորդանանյան հարաբերությունները, որի ապացույցը սույն թվականի դեկտեմբերի սկզբին նախագահ Գյուլի՝ Աման կատարած այցելությունն էր: Հորդանանը կարելորագույն դերակատարություն ունի Միջին Արեւելքի անվտանգության ու կայունության հաստատման գործում եւ աչքի է ընկնում իր հավասարակշռված քաղաքականությամբ: Հորդանանը տարածաշրջանում ԱՄՆ ամենասերտ դաշնակիցներից է, արաբական այն պետություններից մեկը, որն Իսրայելի հետ խաղաղության պայմանագիր է ստորագրել:

Թուրքիան սերտորեն համագործակցում է նաեւ արաբական իսլամական աշխարհի ամենահանգուցային պետություններից մեկի՝ Սաուդյան Արաբիայի հետ, ինչը նշանավորվեց նախագահ Գյուլին շնորհավորելու համար Արդալլահ թագավորի՝ 2006թ. օգոստոսին Թուրքիա կատարած այցով: Սաուդական թագավորի այցին հետեւեցին թուրքական այցելությունները, ինչը մի նոր որակ ստեղծեց երկկողմ հարաբերություններում: Սերտ են Թուրքիայի հարաբերությունները նաեւ արաբական աշխարհի ամենաազդեցիկ երկրներից մեկի՝ Եգիպտոսի հետ, որի հետ համագործակցությունը հիմնականում առնչվում է էներգետիկ ոլորտին եւ տարածաշրջանային անվտանգությանը: Մասնավորապես, Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի հետ ջերմ հարաբերությունները մատնանշում են այն ճանապարհը, որով Թուրքիան փորձում է մերձենալ Միջին Արեւելքի սուննի արաբական պետություններին:

Թուրքիայի միջինարեւելյան, այդ թվում՝ արաբական քաղաքականության աննախադեպ ակտիվացումը տարաբնույթ վերլուծությունների առիթ է դարձել: Որոշ տեսակետների համաձայն՝ միջինարեւելյան քաղաքականությունը Անկարան օգտագործում է որպես այլընտրանք Եվրամիության անդամակցությանը, որի արդյունքում Թուրքիայի եւ Արեւմուտքի, ինչպես նաեւ Թուրքիայի եւ Իսրայելի հարաբերություններում այլեւ սառնություն է առաջացել: Այդ տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում The Wall Street Journal-ում Միջին Արեւելքի քաղաքականության վաշինգտոնյան ինստիտուտի արաբական ծրագրի ղեկավար Դ.Շենկերի «ՆԱՏՕ-ն առանց Թուրքիայի» խորագիրը կրող հոդվածը: Հեղինակի կարծիքով՝ վերջին շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության եւ կյանքի բոլոր կողմերի իսլամացումը կարող է հանգեցնել ՆԱՏՕ-ից Թուրքիայի դուրս գալուն: Շենկերի համոզմամբ՝ Անկարայի արտաքին քաղաքական ուղեգիծը հակասում է ՆԱՏՕ կանոնադրությանը: Իսկ դա նշանակում է, որ Թուրքիան դաշինքում մնալու դեպքում անգամ կդադարի լինել հուսալի գործընկեր: Արեւմտյան վերլուծաբանները Միջին Արեւելքում Թուրքիայի հարաճուն ներգրավվածությունը գնահատում են որպես Անկարայի նահանջ հավասարակշռված քաղաքականությունից:

Իրականում տպավորությունն այնպիսին է, որ Թուրքիան ձգտում է ամրապնդել իր երկրի անվտանգության մեխանիզմները, իրականացնում է բազմակողմ արտաքին քաղաքականություն, որի կարեւոր բաղադրիչներից մեկն արաբական ուղղությունն է: Միեւնույն ժամանակ, արաբական իսլամական աշխարհում Թուրքիայի նկատմամբ ձեւավորված վստահության պատճառներից մեկը պայմանավորված է այդ երկրի հասարակական կյանքում իսլամի դիրքերի ամրապնդմանն ուղղված ԱԶԿ ջանքերով:

Հարկ է նշել, որ Միջին Արևելքում Թուրքիայի գործողությունները, շատ դեպքերում, համաձայնեցված են ԱՄՆ-ի հետ, որը ձգտում է Թուրքիայի աջակցությամբ թուլացնել լարվածությունը տարածաշրջանում: Չնայած թուրք-ամերիկյան հարաբերությունների որոշակի ելեւէջներին եւ տարածաշրջանային առանձին խնդիրներում Թուրքիայի անկախ գործողություններին, դրանք որոշակիորեն փոխշահավետ են: Ասվածի ապացույցը 2009թ. դեկտեմբերի 7-ին Էրդողանի՝ ԱՄՆ կատարած այցելությունն է եւ ակտիվ համագործակցության հեռանկարի մասին կողմերի հավաստիացումները:

Պետք է նշել, որ արաբական աշխարհում Թուրքիայի ինտեգրումը բավական հաջող է ընթանում, հատկապես եթե համեմատելու լինենք արաբական գործերին միջամտելու Իրանի փորձի հետ: Մերձավոր-արեւելյան խնդիրներն Իրանը, որպես կանոն, ձգտում է օգտագործել իբրեւ գործիք Արեւմուտքի հետ իր հարաբերություններում, ի վնաս արաբական միասնության: Բացի այդ, արաբական պետությունները հիմնականում չեն վստահում Իրանին, քանի որ վերջինս փորձում է շահարկել շիական գործունը՝ ապակայունացնելով իրավիճակը շիա բնակչություն ունեցող առանձին արաբական երկրներում, ինչպես, օրինակ, Լիբանանում, Իրաքում, Սաուդյան Արաբիայում, Մարոկոյում եւ այլն: Այդ համատեքստում թուրքական դիվանագիտությունն ամեն կերպ ձգտում է ի ցույց դնել, որ հանդես է գալիս որպես Միջին Արեւելքում «խաղաղության եւ կայունության» հաստատման երաշխավոր, որն արաբական երկրներին կոչ է անում միավորել ջանքերը:

¹ Միջինարեւելյան քաղաքականության համատեքստում Թուրքիան ջերմացրել է կապերը Իրանի հետ, որի հետ հարաբերությունները՝ պայմանավորված քրդական գործնով, նախկինում նույնպես լարված էին, իսկ ներկայումս Թուրքիայի համար դրանք շահեկան են՝ նախեւառաջ էներգետիկ համագործակցության տեսանկյունից: Թուրքիան արդի փուլում պատրաստ է աջակցել Իրանի միջուկային ծրագրի խաղաղ լուծման ջանքերին, որի հարցում Թեհրանն Անկարային համարում է վստահելի գործընկեր, ի տարբերություն Մոսկվայի, որի հետ որոշակի տարածայնություններ են ի հայտ եկել:

Նշենք նաեւ, որ ներկայումս Թուրքիան հանդես է գալիս Իրանի եւ Պակիստանի միջեւ միջնորդությամբ, ինչպես նաեւ փորձում է, ԱՄՆ աջակցությամբ, ներդրում ունենալ կայունության հաստատմանը Աֆղանստանում, որտեղ ներկայումս գտնվում են 1750 թուրք զինվորներ:

ԹՈՒՐՔԻԱ – ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ *Արտաշես Տեր-Հարությունյան*

Սույն թվականի նոյեմբերի 23-ին Ստամբուլում կայացած թուրք-իսրայելական տնտեսական հանձնաժողովի հերթական նիստը՝ երկկողմ հարաբերություններում վերջին մեկ ու կես տարվա ընթացքում ի հայտ եկած լարվածության լիցքաթափման առումով, թերեւս, էական ոչինչ չտվեց:

Թուրքիա–իսրայել հարաբերություններում առաջացած տարածայնություններն ուղղակի կապ ունեն Անկարայի արտաքին քաղաքականության նոր ռազմավարության հետ, այն է՝ գերիշխող դիրք գրավել մերձավորարեւելյան մահմեդական միջավայրում: Ուստի, քիչ հավանական է, որ առաջիկայում թուրք-իսրայելական հարաբերությունները վերստին դառնան բարեկամական:

Իրավիճակային դիտարկում

Այս տարվա հունվարին Դավոսի համաշխարհային տնտեսական գագաթաժողովում Թուրքիայի վարչապետի ու Իսրայելի նախագահի միջեւ տեղի ունեցած սկանդալային հայտնի միջադեպին¹ հաջորդած ժամանակահատվածը ցույց տվեց, որ երկկողմ հակասությունները միայն խորացել են:

Ա.թ. հոկտեմբերի 9-ին պաշտոնական Անկարան անսպասելիորեն հայտնեց, թե չեղյալ է հայտարարում ՆԱՏՕ գծով իր դաշնակիցների ու Իսրայելի հետ ամեն տարի անցկացվող «Անատոլյան արծիվ» զորավարժությունները, որոնք պետք է կայանային հոկտեմբերի 12–24-ը: Ուշագրավ է, որ օրեր անց թուրքական մամուլը բերեց երկու պատճառաբանություն: Նախ ներկայացվեցին վարչապետ Էրդողանի խոսքերը, թե թուրք ժողովուրդը չի կարող թույլ տալ, որ պաղեստինցիների տները ռմբահարող իսրայելական օդուժը Թուրքիայում զորավարժություններ անցկացնի: Իսկ այնուհետեւ ասվեց, թե զորավարժությունները չեղյալ հայտարարելու պատճառն այն է, որ Իսրայելն ուշացնում է Թուրքիայի պատվիրած անօդաչու Heron ինքնաթիռների մատակարարումը:

Հատկանշական է, որ տեղի ունեցածից ընդամենը օրեր անց՝ հոկտեմբերի 13-ին, Հալեպում Սիրիայի ու Թուրքիայի արտգործ-նախարարներ Վալիդ Մուալեմը եւ Ահմեդ Դավութօղլուն հայտարարեցին

երկկողմ Ռազմավարական խորհրդի ստեղծման մասին, որը պետք է գումարվի տարին առնվազն մեկ անգամ եւ քննարկի ռազմաքաղաքական ու տնտեսական հարցեր: Նույն օրը Սիրիայի պաշտպանության նախարար, գեներալ Ալի Չաբիբին հայտնեց այս տարվա ընթացքում սիրիաթուրքական թվով երկրորդ զորավարությունների մեկնարկի մասին:

Արդեն նոյեմբերին Heron ինքնաթիռների պատմությունը շարունակություն ստացավ: Նոյեմբերի 21-ին Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը հայտարարեց, թե Իսրայելն ունի 50 օր, որպեսզի ավարտին հասցնի Heron-ների մատակարարումը, այլապես Թուրքիան կիրաժարվի պայմանագրից: Պետք է ենթադրել, որ Թեյ Ավիլի որոշումը՝ այդչափ հետաձգել ինքնաթիռների մատակարարումը, պարզ ճնշում է Անկարայի նկատմամբ:

Վերջին շրջանում թուրք-իսրայելական հակասություններն ընդգծող նշանակալից իրադարձություն էր հոկտեմբերի 28-ին Թեհրանում Իրանի ու Թուրքիայի միջև ձեռք բերված գազային պայմանավորվածությունը, որով Անկարան պետք է \$3.5 մլրդ ներդնի իրանական «Չարավային Փարս» գազահանքում, եւ իրավունք է ստանում ոչ միայն ներմուծել իրանական կապույտ վառելիքը, այլեւ արտահանել այն երրորդ երկրներ: Ուշագրավ է, որ իր թեհրանյան այցելությունից առաջ Էրդոհանը չեղյալ հայտարարեց հոկտեմբերի 23-ին նախատեսված այցը Վաշինգտոն: Արեւմտյան ու, մասնավորապես, իսրայելական աղբյուրները գրում են, թե գազային պայմանագիրն ունի նաեւ գաղտնի դրույթներ, ինչն այն գերշահեկան է դարձնում թուրքական կողմի համար: Այդ առումով նշենք, որ գազային պայմանագրի կնքմանը նախորդած ու հաջորդած ժամանակահատվածում Թուրքիայի վարչապետն ու արտգործնախարարը, Իրանի միջուկային խնդրի հետ կապված՝ հանդես եկան հրապարակային հայտարարություններով՝ հօգուտ Թեհրանի: Թուրքիան անգամ առաջարկեց ԱԵՄԳ-ին՝ իրանական ուրանը պահել իր տարածքում, ինչպես նաեւ փորձում է միջնորդի դեր ստանձնել ԱՄՆ-Իրան բանակցություններում²:

Վերը ներկայացվածի շարքին է դասվում նաեւ հոկտեմբերին Թուրքիայի հանրային հեռուստաալիքով (TRT) «Էյրիլիկ» («Բաժանում») հեռուստասերիալի ցուցադրումը, որը պատկերում էր իսրայելական բանակի «դաժանությունները» պաղեստինցի խաղաղ բնակիչների նկատմամբ: Խոսքն, իհարկե, տեղեկատվական ակցիայի մասին է, բայց հիմնական դիտարկումն, անշուշտ, այն է, որ Թուրքիայի ղեկավարությունը որոշում էր կայացրել հակաիսրայելական տեղեկատվական կամպանիա սկսել երկրում, ինչն իր հերթին կարող է որոշակի առումով վկայել թուրք-իսրայելական հակասությունների լրջության մասին:

Եվ վերջապես, ս.թ. նոյեմբերի 3-ին Իսրայելի ռազմական հետախուզության պետ Անոս Յադլինը Քնեսետի արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերով հանձնաժողովում կայացած լսումների ժամանակ հայտարարեց, թե պաղեստինյան «Համաս» խմբավորումը հաջող կերպով փորձարկել է իրանական արտադրության «երկիր-ծով» տեսակի, 60կմ հեռահարություն ունեցող հրթիռ³: Յադլինի խոսքերով, Թեհրանն այդ և այլ զինատեսակներ «Համասին» և լիբանանյան «Հիզբալլահին» մատակարարել է Սիրիայի և առաջին անգամ՝ Թուրքիայի միջոցով:

Իհարկե, հնարավոր է, որ բրիգադի գեներալ Յադլինի ներկայացրածը (հատկապես Թուրքիայի մասով) ապատեղեկատվություն լինի, սակայն թուրք-իսրայելական վերջերս շարունակաբար լարվող հարաբերությունների ֆոնին դա այդքան էլ կարելու չէ: Ավելի կարելու է բուն հայտարարության փաստը, քանի որ այն նշանակում է իրավիճակի փոփոխություն: Այս առումով, հարկ է առանձնացնել հետևյալ հանգամանքները՝

- Անկարայի հասցեին Թել Ավիվի հնչեցրած մեղադրանքը վերաբերում է Իսրայելի համար խիստ զգայուն ոլորտին, և սովորաբար այդ կարգի մեղադրանքներ հրեական պետությունը ներկայացնում է հակառակորդ երկրներին,

- պակաս կարելու չէ, թե ով է հնչեցնում մեղադրանքը. հայտնի է, թե Իսրայելի որոշումների կայացման մեխանիզմում ինչ դերակատարում ունեն հետախուզական երեք կառույցների՝ ներքին անվտանգության (Shabak կամ Shin Bet), արտաքին հետախուզության (Mossad) և ռազմական հետախուզության (Aman) ղեկավարները,

- և վերջապես, տարվա սկզբից, երբ Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաները տարաբնույթ մեղադրանքներ էին ներկայացնում Իսրայելի հասցեին, առաջին անգամ է, որ Թել Ավիվը որոշեց պատասխանել բավական ծանրակշիռ կերպով:

Չետեություններ

Ներկայացվածն, իհարկե, չի նշանակում, թե թուրք-իսրայելական հարաբերություններն անդառնալիորն վատացել են: Անգամ նոր ձեւավորվող պայմաններում երկու երկրները միմյանց կարիքն ունեն, ինչը միայն ուժեղացնում է նրանց դիրքերը Մերձավոր Արեւելքում: Սակայն կարելու է գիտակցել, որ թուրք-իսրայելական հարաբերությունները մտել են ձեւափոխման փուլ, և քիչ հավանական է, որ նրանք լինեն այնպիսին, ինչպիսին էին վերջին հիսուն տարում:

Սա իր հերթին նշանակում է, որ այն չի կարող չանդրադառնալ նաև ողջ Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական փոխդասավորվածության վրա, քանզի ժամանակին նրանց դաշինքը մերձավորարևելյան ճարտարապետության առանցքային գծերից մեկն էր:

Եվ վերջապես, ներկայացվածն առնչվում է նաև Հայաստանին: Թուրքիայի նկատմամբ Իսրայելի ունեցած ճնշամիջոցներից մեկը ԱՄՆ-ում առկա հրեական լոբբինգն է, եւ, օրինակ, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում այստեղ կարող է մեզ համար նոր հնարավորություն բացվել:

¹ Այս միջադեպից առաջ Էրդողանը հանդես էր եկել ոչ պակաս սկանդալային մի հայտարարությամբ. ս.թ. հունվարի 16-ին Նյու Յորքում հանդիպելով ՄԱԿ գլխավոր քարտուղար Բան Գի Մունի հետ, Թուրքիայի վարչապետը պահանջել էր Իսրայելին զրկել ՄԱԿ անդամությունից՝ Ղազայում տեղ գտած պատերազմական գործողությունների պատճառով:

² Հատկանշական է, որ վերջին շրջանում արեւմտյան վերլուծաբանական հանրությունը ավելի շատ է գրում արագորեն ձեւավորվող թուրք-իրանական պայմանավորվածությունների փաթեթի մասին: Այդ իմաստով առանձնանում է հրապարակված տեղեկությունն այն մասին, թե հոկտեմբերի 28-ին Թեհրանում կայացած Էրդողան-Ահմադինեժադ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու երկրների հետախուզությունների համագործակցության վերաբերյալ, որը վերջնական տեսքի է բերվել նոյեմբերի 9-ին Ստամբուլում՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության տնտեսական գազաթափողվի շրջանակներում տեղի ունեցած Ահմադինեժադ-Գյուլ հանդիպման ընթացքում:

³ Իսրայելի ռազմական հետախուզության պետի ներկայացրած հաշվարկի համաձայն, «Համասի» զինանոցում հայտնված այդ հրթիռը կարող է հասնել Թել Ավիվ: Մինչդեռ, իսրայելա-պաղեստինյան վերջին պատերազմի ժամանակ «Համասի» հրթիռների առավելագույն հեռահարությունը 40կմ էր:

ԿՆՈՋ ԴԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԲԱՆԱԿՈՒՄ

Կարեն Վերանյան

Իսրայելում եւ առհասարակ հրեության շրջանում կնոջ բարձր կարգավիճակը գլխավորապես պայմանավորված է հրեական կրոնաբարոյական ավանդույթներով: Հին Կտակարանի պատմություններում քիչ չեն հրեա կանանց կերպարները, որոնք առանցքային նշանակություն են ունեցել հրեության գոյապահպանման հարցում: «Մովսեսի օրենքում» մեծապես արժեւորվում է կնոջ դերը. տղամարդկանց հետ հավասար, կանանց իրավունք էր վերապահվում զոհ մատուցել Աստծուն, նույնիսկ՝ առանց տղամարդու մասնակցության: Թալմուդում կինը բնորոշվում է որպես ընտանիքի երջանկության ու հաջողության պահապան՝ «Օրինանքը իջնում է տան վրա միայն կնոջ շնորհիվ»:

Չնայած հուդայական արժեհամակարգում հրեա կնոջը տրվող կարեւորությանը, երկար ժամանակ պահանջվեց հրեական՝ իր էությանը հայրիշխանական միջավայրում կնոջ կարգավիճակի փոփոխման համար: Միջնադարում հրեա մի շարք մտածողներ լուրջ քայլեր ձեռնարկեցին հրեա կանանց դերի բարձրացման ուղղությամբ, որոնք, սակայն, մշտապես արժանանում էին ավանդապաշտների դիմադրությանը:

Հրեությունում կնոջ նկատմամբ ավանդական կարծրատիպերը, կարելի է ասել, կոտրվեցին հատկապես 20-րդ դարի սկզբներին՝ կապված սիոնիստական շարժման վերելքի եւ Պաղեստինում Հրեական ազգային օջախի ստեղծման հետ, երբ հրեա կանայք ակտիվ մասնակցություն ունեցան հրեական պետականության վերականգնման գործընթացին: Անգնահատելի էր հրեա կանանց դերը Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստների հետապնդումներից հազարավոր հրեաների փրկության հարցում:

Իսրայել պետության հիմնադրումից ի վեր հրեա կինը շարունակել է ակտիվորեն ներգրավվել պետականաշինության կարեւորագույն գործին: Զգալի է նրանց ավանդը Իսրայելի ներքին ու արտաքին քաղաքականությունում:

Կինն առանցքային նշանակություն ունի նաեւ հրեաների ազգային ինքնության տեսանկյունից: 1950թ. ընդունված «Հրեաների հայրենադարձության մասին» օրենքում նշված է. «Հրեա է համարվում այն մարդը, որը ծնվել է հրեա կնոջից կամ ընդունել է հուդայականություն եւ չի դավանում այլ կրոն»:

Կիրը Իսրայելի պաշտպանության բանակում

Հրեա ժողովրդի պաշտպանության եւ անվտանգության ապահովման հարցում հրեա կնոջ մասնակցության առաջին հիշատակումներին հանդիպում ենք դեռեւս Հին Կտակարանում: «Դատավորների գրքում» պատմվում է Դեբորա անունով հրեա կնոջ մասին, որը ներկայանում է որպես ժողովրդի դատավոր, լուծում իր ժողովրդի ներկայացուցիչների դատական վեճերը: Հետագայում, երբ քանանացիների թագավորը սպառնում էր հրեա ժողովրդի անվտանգությանը, Դեբորան դարձավ իր ժողովրդի առաջնորդը եւ կոչ արեց պատերազմել թշնամու դեմ: Դեբորան պատերազմում հանդես էր գալիս ոչ միայն իբրեւ զորահրամանատար, այլեւ որպես հրեա ժողովրդի հոգեւոր առաջնորդ: Մեջբերենք պատերազմի ընթացքում Դեբորայի հայտնի ելույթից. «Աստծո թշնամիները իսրայելցիների թշնամիներն են, եւ այդ պատճառով Աստված մեր կողմն է»:

Հրեության անվտանգության ապահովման հարցում հրեա կանանց ակտիվ մասնակցության ջատագովներն էին հատկապես սիոնիստական շարժման հիմնադիր այրերը: Իսրայել պետության առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի խոսքերով, *«Բանակում զինծառայությունը հանդիսանում է քաղաքացիական պարտքի կատարման բարձրագույն խորհրդանիշը, եւ քանի դեռ կանայք ու տղամարդիկ հավասար չեն այդ պատվավոր պարտականության կատարման հարցում, չի կարելի խոսել կանանց իրական իրավահավասարության մասին»:*

Հրեա կանայք, տղամարդկանց հետ կողք կողքի, մարտնչել են հրեական պետականության համար մղված պայքարում: Նրանք կամավոր հիմունքներով ներգրավվել են, մասնավորաբար, հրեական այնպիսի ընդհատակյա ռազմական խմբավորումներում, ինչպիսիք են Հագանա-ն (որը հետագայում դարձավ Իսրայելի պաշտպանության բանակի հիմքը), Լեհի-ն եւ Էցել-ը՝ կազմելով այդ կազմակերպություններում ներառված մարտիկների շուրջ 20%-ը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի դեմ պայքարին միացան շուրջ 6 հազար հրեա կանայք, որոնցից առաջին հերթին պետք է հիշատակել բանաստեղծուհի Հաննա Սենեշին (1921–1944թթ.): 1930-ականներին Հունգարիայում սկսված հակասեմականության ալիքը Հ.Սենեշին ներգրավեց տեղի սիոնիստական երիտասարդական շարժման մեջ: Հ.Սենեշը պատկանում է Բուդապեշտի այն հրեաների շարքին, որոնք ցանկանում էին իրենց հետագա կյանքը կապել Պաղեստինում ապագա Իսրայել պետության ստեղծման գործընթացի հետ: 1939թ. սեպտեմբերին նրան հաջողվեց տեղափոխվել Պաղեստինում

գործող Նահալալ հրեական գյուղատնտեսական բնակավայր: Եվրոպայում նացիստների դեմ հրեաների դիմադրության կազմակերպման նպատակով Հագանան նախաձեռնեց հատուկ վերապատրաստված մարտիկների հավաքագրումն ու դեպի Եվրոպա նրանց ինքնաթիռներով տեղափոխումը: 1942թ. Հ.Սենեշը համալրեց այդ կամավորների շարքերը՝ որպես կապավոր, իսկ 1944թ. մարտին տեղափոխվեց Հարավսլավիայի պարտիզանական բազա: Երեք ամիս անց, սակայն, 1944թ. հունիսին հունգարական սահմանը հատելիս նա գերեվարվեց: 1944թ. նոյեմբերին, 5 ամիս տևած հարցաքննություններից ու կտտանքներից հետո, որոնք այդպես էլ չստիպեցին նրան թշնամուն հայտնել ռադիոհաղորդչի գաղտնի կոդը, Սենեշը գնդակահարվեց: 1950թ. նրա մասունքները տեղափոխվեցին Իսրայել եւ վերահանձնվեցին հողին Երուսաղեմի Հերցելի լեռան վրա:

Հաննա Սենեշի՝ որպես գերեվարված ու կտտանքների ենթարկված կնոջ պատմությունը դեռ մի քանի տասնամյակ Իսրայելում ընկալվում էր իբրեւ հրեության ամենաողբերգական էջերից մեկը: Սակայն հետագա տարիներին, հրեական հերոսապատումների հիման վրա ազգային կոլեկտիվ հիշողության վերականգնման քաղաքականության արդյունքում, Հաննա Սենեշի պատմությունը ողբերգությունից դարձավ հերոսապատում: Հ.Սենեշի՝ որպես հայրենամուկ կնոջ, կերպարով են այսօր Իսրայելի պաշտպանության բանակում բարոյահոգեւոր պատրաստվածություն անցնում հազարավոր հրեա կին զինծառայողներ:

1948թ. մայիսի 16-ին հիմնվեց Իսրայելի պաշտպանության բանակի Կանանց կորպուսը, որի առաջին հրամանատարը դարձավ գնդապետ Շոշանա Գերշոնը: Կանանց կորպուսի հիմնական գործառնություններից էին երկրի ՁՈւ-ում հրեա կանանց զինծառայության կազմակերպումը, ուսուցումը, նրանց իրավունքների պաշտպանությունը եւ այլն: 2001թ., սակայն, Կանանց կորպուսը լուծարվեց, որի փոխարեն ստեղծվեց Իսրայելի ՁՈւ Գլխավոր շտաբի պետի՝ Կին զինծառայողների հարցերով խորհրդակցականի վարչությունը՝ գեներալ-մայոր Սյուզի Յոգելի գլխավորությամբ: Նախորդ ինստիտուտի համեմատ այս կառույցն օժտված էր առավել մեծ լիազորություններով, ինչը նույնպես վկայում է վերջին շրջանում Իսրայելի պաշտպանության բանակում եւ հասարակությունում կնոջ կարգավիճակի բարձրացման մասին:

«Ձինծառայության մասին» օրենքի համաձայն, պարտադիր հիմունքներով զորակոչման են ենթակա բոլոր 18 տարին լրացած, չամուսնացած եւ երեխաներ չունեցող հրեա աղջիկները: Հրեա կրոնավոր եւ այն կանայք, որոնց համար զինծառայությունը հակասում է իրենց բարոյական արժեքներին, անցնում են քաղաքացիական ծառայություն: Նկատենք, որ

ի տարբերություն վերջիններիս, պարտադիր զինծառայություն անցած հրեա կանայք համեմատաբար հեշտ են ինտեգրվում երկրի հասարակական, սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կյանքում, քանզի Իսրայելում զինծառայությունը համարվում է կարեւորագույն պլացդարմ յուրաքանչյուր քաղաքացու հասարակական առաջխաղացման համար:

Սկզբում Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց զինծառայությունը 22 ամիս էր, սակայն վերջին տարիներին այն ընդհուպ մոտեցել է տղամարդկանց պարտադիր զինծառայության ժամկետին, որը հաշվվում է 3 տարի: Իհարկե, սկզբնական շրջանում կանանց զինծառայությունը հիմնականում տարածվում էր սպասարկող-վարչարարական եւ նատակարարման ոլորտներում, սակայն հետագա տարիների ընթացքում, երբ երկրի ՁՈւ-ում ներգրավված հրեա կին զինծառայողները զգալի ներդրում ունեցան արաբական երկրների հետ Իսրայելի մղած պատերազմներում, անհրաժեշտություն առաջացավ ներգրավելու կանանց բանակի առավել նարտականացված ստորաբաժանումներում եւս: Իսրայելի ՁՈւ-ում կանանց ինտեգրման խորացմանը նպաստեց նաեւ այն, որ աստիճանաբար մեծացավ երկրի պաշտպանության համակարգում զինծառայություն անցնել ցանկացող կանանց թվաքանակը:

Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց ներգրավման հարցում լուրջ խթան հանդիսացավ 1955թ. Հացոր ավիաբազայում «Մոսկիտո» տեսակի ինքնաթիռի վթարը, երբ սերժանտ Էսթեր Արդիտին, չնայած կյանքին սպառնացող վտանգին, մտնելով այրվող ինքնաթիռ, կարողացավ փրկել անձնակազմի հրամանատար Յակով Թալմոնին, ինչից ընդամենը մի քանի վայրկյան անց ինքնաթիռը պայթեց: Այդ սխրագործության համար Արդիտին դարձավ Իսրայելի ՁՈւ առաջին հրեա կին զինծառայողը, որը պարգևատրվեց «Մատուցած զերազանց ծառայությունների համար»՝ նշանակությամբ զինվորական երրորդ կարգի մեդալով, որը տրվում է «ընդօրինակման արժանի տղամարդկության ցուցաբերման համար»:

1952թ. Իսրայելում ընդունված «Զինծառայության մասին» օրենքի համաձայն, Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց զինծառայությունը սահմանափակվում էր երկու հիմնական կետերով. նարտական գործողություններ (հիմնականում հրեա կնոջ գերեվարումից խուսափելու պատճառաբանությամբ) եւ ֆիզիկական բարձր կարողություններ պահանջող առաջադրանքներ: 1995թ. Իսրայելի Գերագույն դատարանը փոփոխություններ մտցրեց երկրի «Զինծառայության մասին» օրենքում, ինչը հնարավորություն ընձեռեց կանանց ծառայելու նաեւ նարտական ստորաբաժանումներում, ինչպես նաեւ ուսանելու օդաչու-

ների եւ ծովային հրամանատարների սպայական ուսումնական հաստատություններում: Արդյունքում՝ 2001թ. լեյտենանտ Ռոմի Ցուկերմանը դարձավ ռմբակոծչի օդաչուի կոչում ստացած առաջին կին զինծառայողը: Իսկ 2007թ. սեպտեմբերին երկրի ՁՈւ-ում ստեղծված կանանց հարցերով հատուկ հանձնաժողովի պատրաստած զեկույցում առաջարկվեց հրեա կանանց ընդգրկել զինվորական բոլոր ստորաբաժանումներում:

Իսրայել պետության հիմնադրումից մինչև 20-րդ դարի 90-ականների վերջերը լուրջ սահմանափակումներ էին գործում կանանց՝ զինվորական բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնելու հարցում. այդ արգելքը վերացվեց միայն վերջին տասնամյակում, ինչը նոր խթան հանդիսացավ Իսրայելի պաշտպանության բանակում հրեա կանանց ներգրավվածության ընդլայնման գործընթացում: Ներկայում Իսրայելի պաշտպանության բանակի զինծառայողների շուրջ 35%-ը կանայք են:

Վերջին երկու տարում Իսրայելի պաշտպանության բանակի հրամանատարությունը լուրջ քայլեր է ձեռնարկում ՁՈւ՝ մինչ այդ բացառապես տղամարդկանց համար նախատեսված մի շարք էլիտար դասընթացներում ընդգրկել նաև կանանց: Վերջերս ավարտվեց երկրի պաշտպանության բանակի պատմության մեջ կին դիպուկահարների պատրաստման առաջին դասընթացը: Այն նախաձեռնվել էր 2004թ. հիմնված «Կարակալ» հետեւակային գումարտակի շրջանակներում՝ գերազանցապես հրեա կանանց մարտական պատրաստվածության ապահովման նպատակով:

Ջգալի է հրեա կանանց ավանդը նաև Իսրայելի հատուկ ծառայությունների ու հետախուզական գործունեության բնագավառներում: Ներկայում կանայք կազմում են Իսրայելի հետախուզական մարմինների օպերատիվ ստորաբաժանումներում ներգրավված անձնակազմի ավելի քան 20%-ը: Ոլորտում առավել աչքի ընկած հրեա կանանցից նախեսառաջ կարելի է առանձնացնել «Մոսադի» նախկին փոխտնօրեն Ալիզա Մազենին, այդ կառույցի վարչական կառավարման պետ Մալկա Բրավերմանին, որը, մասնավորաբար, մշակել է Ադոլֆ Էյխմանի հայտնաբերման ու ձերբակալման հայտնի գործողության նախագիծը:

ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Սուրեն Մանուկյան

Նոյեմբերի վերջին Շվեյցարիայում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքներով երկրում արգելվեց մինարենների կառուցումը: Շվեյցարական հանրաքվեից հետո այլ եվրոպական երկրներում հարցումները ցույց տվեցին, որ շվեյցարացիների հետ համամիտ են նաեւ Ֆրանսիայում եւ Գերմանիայում: Շատ եվրոպական երկրներում տարերայնորեն սկսեցին ձեւավորվել հակաիսլամական շարժումներ: Այսպես, Անգլիայում ձեւավորված «Անգլիայի պաշտպանության լիգան» Նոթինհեմ քաղաքում ցույց կազմակերպեց «Մենք ուզում ենք վերադարձնել մեր կորցրած երկիրը» կարգախոսով: Քայլեր են ձեռնարկվում նաեւ կառավարությունների կողմից: Օրինակ, դանիական կառավարությունը բավական մեծ նյութական փոխհատուցում առաջարկեց Դանիայում ապրող արաբական կամ մուսուլմանական երկրներից ներգաղթածներին՝ հեռանալու եւ սեփական երկիր վերադառնալու համար: Նորվեգիան մի քանի տասնյակ մուսուլման հանցագործների արտաքսեց իրենց ծագման երկրներ:

Այս գործընթացները ցույց են տալիս, որ եվրոպական երկրներում մտահոգված են մայրցամաքում իսլամական ազդեցության աճով, որն առավելապես հետեւանք է կտրուկ փոխվող ժողովրդագրական պատկերի, երբ մուսուլման բնակչության քանակը եւ համամասնությունն աշխարհում ու, մասնավորապես, Հին մայրցամաքում շարունակաբար ավելանում են:

Մուսուլմանների թիվն աշխարհում

Ժողովրդագրությունը միջազգային քաղաքականության վրա ազդող կարեւորագույն գործոններից է: Ժողովրդագրական ներուժը, միգրացիաները զգալի ազդեցություն են թողնում ժամանակակից աշխարհում ընթացող գործընթացների վրա:

Այս տեսակետից ուշագրավ է Կրոնական եւ հասարակական կյանքի ուսումնասիրման Pew Research Center's Forum ամերիկյան վերլուծական կենտրոնի կողմից 2009թ. հոկտեմբերին հրապարակված աշխարհի մուսուլման բնակչության վերաբերյալ զեկույցը: Այն հիմնվում է մոտ 1500 աղբյուրների եւ 232 երկրներում իրականացված ուսումնասիրությունների վրա: Բացի կենտրոնի աշխատակիցներից, հետազոտությանը մասնակ-

ցուքյուն են բերել ժողովրդագրության ոլորտի մոտ 50 փորձագետներ եւ գիտնականներ տարբեր համալսարաններից: Ձեկույցը որոշակի պատկերացում է տալիս աշխարհում մուսուլման բնակչության քանակի, տեղաբաշխվածության եւ համամասնության մասին:

Ըստ զեկույցի, այսօր աշխարհում ապրում է 1 միլիարդ 570 միլիոն իսլամադավան: Pew Global Research կենտրոնի գլխավոր գիտաշխատող Բրայան Գրիմի հաստատմամբ՝ թիվը բավական անսպասելի էր նաեւ զեկույցի հեղինակների համար:

Իսլամը հետեւորդների քանակով երկրորդ կրոնն է աշխարհում՝ քրիստոնեությունից հետո: Քրիստոնյաների թիվն աշխարհում մոտ 2 միլիարդ 200 միլիոն է: Ձեկույցի ուսումնասիրությունը մի քանի հետաքրքիր փաստ է արձանագրում:

Այսպես, իսլամի հայրենիքում՝ Մերձավոր Արեւելքում, բնակվում է իսլամադավանների փոքր մասը: Ըստ Բրայան Գրիմի՝ «Շատ մարդկանց պատկերացմամբ իսլամը հիմնականում Մերձավոր Արեւելքի, արաբների կրոնն է: Իրականում, մեր հետազոտությունը ցույց տվեց, որ իսլամը գերազանցապես ասիական երկրների կրոնն է»: Մուսուլմանների ամենամեծ թիվը՝ 61,9 տոկոսը, բնակվում է հարավային եւ հարավարեւելյան Ասիայում, 20 տոկոսը՝ Մերձավոր Արեւելքում, 15,3 տոկոսը՝ Աֆրիկայում, Սահարայից հարավ, իսկ Եվրոպայում եւ Ամերիկաներում՝ ընդամենը 2,7 տոկոսը:

Ամենամեծաթիվ մուսուլմանական բնակչությամբ տասը երկրները միավորում են աշխարհի մուսուլմանների երկու երրորդին:

Ինդոնեզիա՝ 202 մլն 867 հազ.; Պակիստան՝ 174 մլն 82 հազ.; Յնդկաստան՝ 160 մլն 945 հազ.; Բանգլադեշ՝ 145 մլն 312 հազ.; Եգիպտոս՝ 78 մլն 513 հազ.; Նիգերիա՝ 78 մլն 56 հազ.; Իրան՝ 73 մլն 777 հազ.; Թուրքիա՝ 73 մլն 619 հազ.; Ալժիր՝ 34 մլն 199 հազ.; Մարոկո՝ 31 մլն 993 հազ.:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի գերազանցությունը զարմանալի չէ, թեեւ հասարակական գիտակցության մեջ այս փաստն արմատավորված չէ: Ինդոնեզիայում ապրում է աշխարհի մուսուլմանների 13%-ը:

Բացի այդ, Աֆրիկայի սեւամորթների շրջանում մուսուլմանների թիվը սպասվածից ավելի քիչ էր՝ մոտ 240 մլն: Մերձավոր Արեւելքի մուսուլման բնակչության 25%-ն ապրում է Եգիպտոսում: Այս տարածաշրջանն աչքի է ընկնում իր մուսուլմանական բնակչության բարձր տոկոսով: Մերձավոր Արեւելքի 20 պետություններից 17-ի (բացառությամբ Իսրայելի, Լիբանանի եւ Սուդանի) բնակչությունն ավելի քան 75%-ով մուսուլմանական է, իսկ

կեսում (Ալժիր, Եգիպտոս, Իրաք, Յորդանան, Քուվեյթ, Լիբիա, Մարոկո, Պաղեստին, Սաուդյան Արաբիա, Թունիս, Արեւմտյան Սահարա եւ Եմեն) այդ համամասնությունը կազմում է 95% եւ ավելի: Ծոցի երկրների (Օման, Բահրեյն, Կատար, ԱՄԷ) ցուցանիշների որոշակիորեն նվազ լինելը պայմանավորված է այնտեղ գոյություն ունեցող այլադավան աշխատուժի որոշակի քանակով, իսկ Սիրիայի պարագայում՝ ավանդական այլ կրոնական համայնքների առկայությամբ:

Իսլամը որպես փոքրամասնության կրոն

Թեեւ մուսուլմանների մեծ մասն ապրում է այն 50 երկրներում, որտեղ իսլամադավանները մեծամասնություն են կազմում, սակայն մի մեծ հատված՝ 317 միլիոն մարդ կամ իսլամադավանների ընդհանուր թվաքանակի մեկ հինգերորդը, ապրում է այն երկրներում, որտեղ իսլամը հիմնական կրոն չէ:

Հնդկաստան՝ 160 մլն 945 հազ. (Հնդկաստանի ընդհանուր բնակչության 13.4%); Եթովպիա՝ 28 մլն 63 հազ. (33.9 %); Չինաստան՝ 21 մլն 667 հազ. (1.6%); Ռուսաստան՝ 16 մլն 482 հազ. (11.7 %); Տանզանիա՝ 13 մլն 218 հազ. (30.2%); Կոտ դ'Իվուար՝ 7 մլն 745 հազ. (36.7%); Մոզամբիկ՝ 5 մլն 224 հազ. (22.8%); Ֆիլիպիններ՝ 4 մլն 654 հազ. (5.1%); Գերմանիա՝ 4 մլն 26 հազ. (5 %); Ուգանդա՝ 3 մլն 958 հազ. (12.1%):

Այս թվերն ավելի տպավորիչ են դառնում, եթե համեմատենք դրանք «ավանդական» իսլամական պետությունների բնակչության թվաքանակի հետ: Օրինակ, Հնդկաստանում, որը հինդուիստական պետություն է, ապրում են ավելի շատ մուսուլմաններ, քան աշխարհի որեւէ երկրում, բացառությամբ Ինդոնեզիայի եւ Պակիստանի: Հնդկաստանում ապրում են ավելի շատ իսլամադավաններ, քան Եգիպտոսում, Գերմանիայում ավելի, քան Լիբանանում, Չինաստանում ավելի, քան Սիրիայում: Չինաստանում կա մեկ նահանգ՝ Սինցզյանը, որտեղ իսլամ բնակչությունը կազմում է մեծամասնություն՝ 53%:

Եվրոպայում ապրում է 38 մլն մուսուլման, ինչը նրա բնակչության մոտ 5%-ն է: Դրանց մի մասը Ռուսաստանի եվրոպական մասի՝ 16 մլն 482 հազ., ինչպես նաեւ Կենտրոնական, Արեւելյան եւ Արեւմտյան Եվրոպայի (Ալբանիա՝ 2 մլն 522 հազ., երկրի բնակչության 80%, Կոսովո՝ 2 մլն, 90%, Բոսնիա-Յերցեգովինա՝ 1 մլն 522 հազ., 40%, Մակեդոնիա՝ 680 հազ., 33% եւ Բուլղարիա 920 հազ., 12.2%) հին համայնքներն են, որոնք ապրում են այնտեղ դարեր շարունակ: Ներգաղթի ընթացքում առաջացած համայնքները հիմնականում Արեւմտյան Եվրոպայում են. ամենաշատը Գերմանիայում՝ 4 մլն 26 հազ., 5%, ամենաբարձր տոկոսը Ֆրանսիայում՝ 3 մլն

554 հազ., 6%, Մեծ Բրիտանիայում՝ 1 մլն 647 հազ., 2.7% եւ Յոլանդիայում՝ 946 հազ., 5.7%: Հետաքրքիր է, որ Եվրոպայում ավելի շատ մուսուլման է ապրում, քան Սաուդյան Արաբիայում: Ամերիկյան աշխարհամասում ամենաշատ իսլամադավաններ ապրում են ԱՄՆ-ում՝ 2 մլն 454 հազ., Արգենտինայում՝ 784 հազար եւ Կանադայում՝ 657 հազար:

Շիա իսլամի ներկայացուցիչներ

Ջեկույցը նաեւ փորձ է կատարում որոշել իսլամի երկու հիմնական ճյուղերին պատկանող հավատացյալների թիվը: Սուննիները մուսուլմանների ճնշող մեծամասնությունն են կազմում՝ 87-90%, իսկ շիաներն ընդամենը՝ 10-13%: Մոտ 154-200 մլն շիաների մեծամասնությունն ապրում է Իրանում, Պակիստանում, Հնդկաստանում եւ Իրաքում:

Իրան՝ 66 – 70 մլն (90-95%); Պակիստան՝ 17 - 26 մլն (10–15%); Հնդկաստան՝ 16 – 24 մլն (10-15%); Իրաք՝ 19-22 մլն (65-70%); Թուրքիա՝ 7-11 մլն (10-15%); Եմեն 8-10 մլն (35-40%); Ադրբեջան՝ 5-7 մլն (65-75%); Աֆղանստան՝ 3-4 մլն (10-15%); Սիրիա՝ 3-4 մլն (15-20%); Սաուդյան Արաբիա՝ 2-4 մլն (10-15%):

Ջեկույցը նշում է, որ կան խմբեր, որոնց դժվար է դասել սուննիների կամ շիաների ուղղությանը, օրինակ, Օմանի խարիջիները, Լիբանանի եւ Սիրիայի դրուզները, կամ ԱՄՆ-ում գործող Իսլամական ազգ շարժումը:

Համամասնության փոփոխություն

Ջեկույցի ամենակարեւոր հետեւություններից է այն, որ ավելացել է մուսուլման բնակչության համամասնությունը Երկրի ընդհանուր բնակչության թվի մեջ:

Այդ համամասնությունը իսլամի ծագման վաղ շրջանից դարեր շարունակ տատանվել է 11-13%-ի շրջակայքում: Տարբեր գնահատումներով Արաբական խալիֆայության ծաղկման շրջանում (8-13-րդ դարեր) մուսուլմանների թիվը 30-50 մլն էր: Հետագայում իսլամական ունման երբեմն աճ է արձանագրում, օրինակ, Օսմանյան կայսրության վերելքի շրջանում, երբ 17-րդ դարում իսլամադավանների համամասնությունը արդեն կազմում էր 12-19%, երբեմն էլ անկում ապրում, օրինակ, 14-16-րդ դարերում՝ մոնղոլների ներխուժումների, խոլերայի ու ժանտախտի համաճարակների պատճառով, 18-19-րդ դդ., երբ իսլամական աշխարհը եվրոպական ճնշման տակ նահանջեց եւ ինքնամեկուսացավ: Սկսած 19-րդ դարի վերջերից իսլամական աշխարհում սկսվում է ժողովրդագրական աճ: Եթե 18-րդ դարի կեսերին մուսուլմանների թիվն աշխարհում մոտ 100 մլն էր, ապա 20-րդ դարի սկզբին այն արդեն 180-210 մլն էր՝ մարդկության 11-13%-ը:

20-րդ դարի առաջին կեսին մուսուլման բնակչության աճի տեմպերը շատ քիչ էին գերազանցում համաշխարհային տեմպերը՝ 1.1%: 1950թ. մուսուլմանների թիվն աշխարհում կազմում էր 330-350 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 13-14%-ը:

20-րդ դարի կեսերի «ժողովրդագրական պայթյունը» մեծապես ներառեց նաև իսլամական աշխարհը: Դարավերջին մուսուլմանների թիվը գնահատվում էր արդեն 1.3 մլրդ: Այսպիսով, իսլամի հետետևորդների թիվը 50 տարվա ընթացքում ավելացել էր չորս անգամ եւ կազմում էր աշխարհի բնակչության 20%-ը:

Այս կտրուկ աճը բացատրվում է երկու հիմնական գործոններով՝ բժշկության զարգացման հետեւանքով մանկական մահացության ցուցանիշի անկմամբ, կյանքի տևողության ավելացմամբ, ինչպես նաև ծնելիության բարձր մակարդակով: Նույն գործոններն «աշխատում» են նաև այսօր: Իսլամական պետությունները հրաժարվեցին իրականացնել ընտանիքի պլանավորման քաղաքականություն, որի հիմնական նպատակն էր բնակչության աճի սահմանափակումը, իսկ կենցաղային եւ ընտանեկան ավանդական կենսաձեւի անփոփոխությունը, այդ թվում նաև վաղ ամուսնությունները, բազմակնությունը, մեծ ավանդական ընտանիքի պահպանումը, կանանց կրթության ցածր աստիճանը, նպաստում էին բազմազավակությամբ եւ բնակչության աճին: Այսօր մուսուլմանները կազմում են աշխարհի 6,8 մլրդ բնակչության 23%-ը:

Չեռանկարներ

Ժամանակակից միտումների պահպանման դեպքում մինչեւ 21-րդ դարի կեսը մուսուլման բնակչությունը գերազանցելու է քրիստոնյա բնակչությանը: Թեեւ մուսուլմանների տարեկան աճի տեմպերը նույնպես նվազել են եւ հասել 2,1%, սակայն, այդուհանդերձ, գերազանցում են քրիստոնյաներին՝ 1,3% եւ անհավատներին՝ 0,8%: Այս պայմաններում, իսլամական երկրների բնակչության ամխուսափելի երիտասարդացումը առաջացնելու է նոր աշխատատեղերի հսկայաքանակ պահանջ: Քանի որ իսլամական պետություններն ի վիճակի չեն լինելու դրանք ստեղծել, ապա երիտասարդության «ավելցուկը» փորձելու է աշխատանք գտնել կամ Եվրոպայում, որտեղ ժողովրդագրական ճգնաժամը նոր հնարավորություններ է ստեղծելու, կամ արմատական իսլամական կազմակերպություններում:

ՑԵՂ, ԱԶԳ, ԺՈՂՈՎՈՐԴ

Պիտի ուզեինք փարատել միանգամ ընդմիշտ մօլորանքը, որ կայ հրապարակի վրայ **Ցեղ, Ազգ** եւ **Ժողովուրդ** բառերու սահմանումներուն, անոնց էութեան, անոնց տարողութեան եւ իւրաքանչիւրի ունեցած նշանակութեան շուրջ: Վասնզի, իրապէս այս երեք բառերը կը բնորոշեն բոլորովին տարբեր բաներ, հասարակագիտօրէն ունին տարբեր բովանդակութիւն, տարբեր սահմանումներ: Ով որ գաղափար ունի տարբերութեանց մասին եւ կ'ըսէ, թէ ցեղ, ազգ եւ ժողովուրդ միեւնոյն բաներն են՝ այդպիսին գիտակցօրէն եւ որոշ դիտաւորութիւնով կը խեղաթիւրէ իրողութիւնները, իսկ ով որ չունի այդ գաղափարը՝ ճշմարտութեան հանդէպ անոր մեղանչումը կը դառնայ անգիտակից եւ ակամայ, հետեւաբար եւ ներելի արարք մը:

ՑԵՂԸ ազգ չէ եւ ոչ ալ ազգը՝ ժողովուրդ, մինչեւ իսկ հասարակ ռանկական հասկացողութիւնով կամ բառերու պարզ արտաբերումով: Ցեղը նախ եւ առաջ **մարդաբանական յատկութեանց** միութիւնն է, անոնց համադրեալ ամբողջութիւնը: Ամէն ցեղ ունի իր ֆիզիքական նկարագիրը, որ արեան ճամբով կ'երկարի դէպի յաւիտենութիւն: Բայց ցեղը, միաժամանակ **հոգեկան ինքնուրոյն եւ բնորոշիչ յատկութեանց** ժառանգականութիւնն է, այսինքն անոնց փոխանցումն ու յաջորդականութիւնը սերունդէ սերունդ, անոնց սկիզբն ու շարունակութիւնը, ու նաեւ վախճանը՝ այլասերած ու անհետացող ցեղերու համար: Այլ խօսքով, Ցեղը **Արեան** (մարդաբանական յատկանիշներու) եւ **Ոգիի** (հոգեկան բնորոշիչ յատկութեանց) միութիւնն է, որուն յաճախ կու գան միանալու նաեւ կարգ մը երկրորդական տարրեր՝ միջավայրերու տարբերութեամբ եւ փոփոխութիւններով: Գիտական սահմանումով, ուրեմն, ցեղը գերազանցապէս մարդաբանական եւ հոգեկան հասկացողութիւն է, իսկ էութեամբ՝ հոգեբանական եւ ֆիզիքական յատկանիշներու կառուցուածք, հոգեւոր բնութիւն եւ արեան ձայն ու առանձնայատկութիւն:

ԱԶԳԸ բոլորովին ուրիշ բան է: Անիկա առաւելապէս պատմութիւնն է եւ անոր արդիւնքը, անոր ընթացքն ու յօրինուածքը: Անիկա անցեալն է եւ ներկան՝ միաժամանակ: Հին ու նոր փառքերն են կամ դժբախտութիւնները: Ստեղծուած վաւերական արժէքներն են, լեզուն, կրօնքը, մշակոյթը՝ **մէկ խօսքով հոգեկան այլազան հարստութեանց համադրութիւնը**: Բայց ամէն ազգ ունի իր բնական հիմքը, որ ցեղն է, ունի իր ցեղային կազմաւորումը, որուն համաձայն եւ ժառանգական տուեալներու հիման վրայ

կրնայ ան զարգանալ ու կատարելագործուիլ: Երբ սակայն ազգի մը զարգացումը տեղի չ'ունենար այդ հիմերու եւ տուեալներու վրայ կամ անոր ներքին, ժառանգական յօրինուածքը կը տկարանայ, քաղաքական ամէն բռնութիւն կ'աղճատէ անոր հոգին ու էութիւնը: Այդ պարագային կանգ կ'առնէ ազգի բնականոն զարգացումը, կը սկսի անկումն ու տեղատուութիւնը եւ կը վտանգուի անոր ապագան: Այն օրէն, երբ ինքնակոչ պոլշեւիզմը՝ իր օտարոտի դաւանանքով ու մեթոտներով, ինքզինքը պարտադրեց հայութեան ցեղային առաքինութիւններուն, անոր ցեղային-ժառանգական արժէքներուն՝ մեր ազգային էութիւնը սկսաւ դժգունիլ ու աղճատիլ, պարզ անոր համար, որ պոլշեւիզմը խորթ էր եւ անհարագատ այդ էութեան:

ԺՈՂՈՎՈՒՐԴ այս երկուքէն ալ տարբեր բան է: **Անիկա ապրող, ժամանակակից սերունդն է**, որ ազգ կոչուելու իրաւունքը կը վայելէ այն ատեն միայն, երբ ունի ընդհանուր ոգի եւ ապրումներ, ինչպէս նաեւ հասարակաց հասկացողութիւն ազգային շահերու եւ նպատակներու մասին ու ամբողջական, կեդրոնաձիգ նուիրում անոնց հանդէպ: Այս պայմաններու տակ միայն ժողովուրդ մը կը դառնայ ազգ եւ համագոյութեան ու ընդհանրական ճակատագրի ուժեղ կապ մը իրարու կը միացնէ անոր բոլոր անդամները: Այս կը նշանակէ, որ ժողովուրդ մը կրնայ ազգ ըլլալ կամ չըլլալ: Կրնայ այսինքն ներկայացնել տարանջատ, իրարամերժ ու կեդրոնախոյս խմբաւորումներ եւ մնալ ժողովուրդ, կրնայ եւ ըլլալ ու զարգանալ որպէս ազգ, երբ իր մէջէն կը ջնջէ բոլոր բացասական, ազգաքանդ գիծերը եւ կը փոխարինէ զանոնք ճշմարտօրէն համազգային դրական առաքինութիւններով:

Կարօ Գեւորգեան

«Ռազմիկ», Սոֆիա, 1943թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տերտերյան «ՊԱՏԻ» ՓԼՈՒՁՈՒԿԱԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	1
Բենիամին Պողոսյան ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	7
Սելակ Սարուխանյան ԻՐԱՆ. ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	13
Հայկ Գաբրիելյան ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ «ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ» ՇՈՒՐՁ	18
Արաքս Փաշայան ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ	27
Արտաշես Տեր-Հարությունյան ԹՈՒՐՔԻԱ – ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ	33
Կարեն Վերանյան ԿՆՈՋ ԴԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԲԱՆԱԿՈՒՄ	37
Սուրեն Մանուկյան ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ	42
Կարո Գելորգեան ՑԵՂ, ԱԶԳ, ԺՈՂՈՎՈՒՐԴ	47

*Շապիկին պատկերված է
Արտոս լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: